ԳԱՅԱՆԵ ՇԱԲՈՒՆՑ

ԴՐՎԱԳՆԵՐ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ ՍՅՈՒՆՅԱՑ ԿԱՆԱՆՑ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Օրբելյանների կառավարման տարիներին Սյունիքում ստեղծված հարաբերական խաղաղությունը նպաստում է տնտեսական և մշակութային կյանքի վերելքին: Վիմագիր արձանագրություններում և Ստեփանոս Օրբելյանի, Ղևոնդ Ալիշանի մոտ պահմանվել են վկայություններ սյունեցի նշանավոր կանանց՝ Մինա Խաթունի, Ասփայի, Մամքանի և ուրիշների կատարած շինարարական և նվիրատվական գործունեության մասին: Այդ մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդում Թանահատի, Նորավանքի, Ըղուերձի, Սպիտակավոր, Ցաղաց վանքի և բազմաթիվ այլ վանքերի նվիրատվական և շինարարական բնույթի արձանագրությունները:

Բանալի բառեր՝ *Օրբելյաններ, Մինա խաթուն, Ասփա, Մամքան, Նորավանք, Թանահատի վանք, Սպիտակավոր եկեղեցի, նվիրատվություն, եկեղեցաշինություն:*

Մենք նպատակ ունենք ներկայացնելու կանանց շինարարական գործունեությունը Օրբելյանների օրոք: Բայց հասկանալու համար՝ ինչը նպաստեց Օրբելյանների օրոք ամուսինների հետ միասին կանանց նվիրատվական և շինարարական այդքան ծավալուն գործունեությանը, համառոտ ներկայացնենք այն քաղաքական իրադրությունը, որի ժամանակ կանայք օժանդակում էին շինարարական գործունեությանը: Բացի այդ Օրբելյան տոհմի կարկառուն ներկացացուցիչներից է նաև միջնադարյան նշանավոր պատմիչ, եկեղեցական գործիչ Ստեփանոս Օրբելյանը: Նախ ասենք, որ Օրբելյանների ծագմանն ու գործունեությանը մանրամասն անդրադարձել է պրոֆեսոր Գ. Գրիգորյանն իր «Սյունիքը Օրբելյանների օրոք»[1] աշխատության մեջ, ուստի մենք շատ համառոտ պատմական ակնարկ կատարենք:

Սյունյաց Օրբելյանների իշխանությունը հաստատվում է 1211 թվականին: Այդ փաստը հաստատում է Նորավանքի 1221 թվականի արձանագրությունը[2]: Լիպարիտն ամուսնացել էր Բուպա իշխանի դուստր Ասփայի հետ: Լիպարիտն ու Ասփան ունեցել են 5 զավակ՝ Էլիկում, Սմբատ, Իվանե, Փախրադոլա և Տարսայիճ: Շուրջ 25 տարի Սյունիքն ապրեց խաղաղ՝ մինչև մոնղոլական արշավանքները: Մոնղոլական արշավանքների ժամանակ Սյունիքում իշխում էր Լիպարիտ Օրբելյանի ավագ որդին՝ Էլիկումը (1225-1253թթ.): Սյունիք արշաված Ասլան Նոյինի և Էլիկում Օրբելյանի միջև կնքվում է դաշնագիր, որի համաձայն Էլիկումը մնում է իշխող դիրքում, սակայն պարտավորվում է մասնակցել մոնղոլական արշավանքներին իր իսկ զորաջոկատներով: Էլիկում Օրբելյանը թաղված է Նորավանքի Օրբելյան իշխանների տոհմական դամբարանատանը: Սյունյաց Օրբելյանների օրոք իշխանության գլուխ է անցնում ոչ թե նրա

1 **Գրիգորյան Գ.**, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981:
2 **Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 48-49:

մանկահասակ որդի Բուրթելը, այլ եղբայրը՝ Սմբատ իշխանը (1273)։ Սմբատ իշխանը Ստեփանոս Օրբելյանի հորեղբայրն էր և որդեգրել էր վերջինիս։ Օրբելյանը հիացական խոսքերով էր ներկայացնում հորեղբորը։ Սմբատ Օրբելյանը ամուսնացած էր իշխանուհի Ռուզուքանի հետ, սակայն զավակ չուներ և մանկուց որդեգրել էր իր կրտսեր եղբայր Տարսայիճի որդի Ստեփանոսին։ Սմբատ Օրբելյանի կառավարման տարիներին զգալիորեն հզորանում է Օրբելյան իշխանապետությունը, որն առաջ է բերում Օրբելյան-Զաքարյան խիստ հակամարտությունը, ինչն էլ ավարտվեց Օրբելյանների հաղթանակով։ Սմբատը 1251թ. մեկնում է Կարակորում, որտեղ Մանգու խանը նրան տալիս է «ինջու»-ական իրավունք, այսինքն Օրբելյանների տիրույթները հայտարարում են արքունական կալվածք, ինչը նշանակում է, որը Սյունյաց իշխանը պատասխանատու է միայն մեծ խանի առջև։ Սմբատ իշխանն իր ողջ ուշադրությունը բևեռում է շինարարական աշխատանքներին։

13-րդ դարի 60-ական թվականները ողբերգական դարձան Օրբելյան ընտանիքի համար։ 1260 թվականին վախճանվում է նրա եղբայր Իվանեն՝ թողնելով Լիպարիտ անունով արու զավակ։ Որոշ ժամանակ հետո մահկանացուն է կնքում նաև մյուս եղբայրը՝ Փախրադոլան։ 1261 թվականին Հուլավու խանի հետ ղփչաղների դեմ պատերազմելիս Թերեք գետի ափին զոհվում է նրա մեծ եղբայր Էլիկումի որդի Բուրթելը։ 1262 թվականին վախճանվում է Սմբատի մայր իշխանուհի Ասփան։ Սմբատ Օրբելյանը վախճանվել է 1273 թվականին Թավրիզում՝ Սյունյաց իշխանությունը վարելով 20 տարի։ Նրա դին տեղափոխվել է Վայոց ձոր և ամփոփվել Օրբելյան իշխանների տոհմական դամբարանատանը։ Նրան փոխարինած Տարսայիճ եղբայրը Սիրանես ճարտարապետի նախագծով կառուցեց Ս. Գրիգոր գողտրիկ եկեղեցին, որը հայտնի է «Սմբատի դամբարան»[1] անունով։ Սմբատի մահից հետո Աբաղա խանից Սյունյաց իշխանապետ է ճանաչվում կրտսեր եղբայր Տարսայիճը (1273-1290թթ)։ Տարսայիճն ամուսնացած էր Արուզ Խաթունի հետ, որը քրիստոնեություն ընդունած այլազգի էր։ Արուզից և Տարսայիճից ծնվում են 3 որդիներ՝ Էլիկում, Ստեփանոս և Փախրադոլա։ Սակայն Տարսահիճը կնոջ կենդանության օրոք ամուսնանում է Հասան-Ջալալի դստեր՝ Մինա խաթունի հետ։ Մինա խաթունի գործունեությանը մենք մանրամասն կանդրադառնանք։ Նշենք, որ Մինա խաթունից Տարսայիճն ունենում է ևս 3 երեխա՝ Ջալալը, Ասփան՝ Գրիգոր Բ Խաչենցու կինը և Մամքանը՝ վրաց վաղամեռիկ արքաեղբայր Մանուելի կինը։ Տարսայիճ Օրբելյանի մահից հետո սկսում են գահակալական վեճերը գահերեցության համար։ Արղուն խանը իշխանապետ է նշանակում Տարսայիճի Էլիկում որդուն (1290-1300), իսկ մնացածները ստանում են իրենց ժառանգաբաժինը։ Էլիկում Օրբելյանի օրոք Սյունիքը ևս ծաղկում է ապրում։ Էլիկում Օրբելյանն ամուսնացած էր Թամթա Խաթունի հետ, ուներ 2 ուստր՝ Բուղտան և Բուրթելը, 2 դուստր՝ Մամախաթունը՝ Էաչի Պռոշյանի կինը և Ռուզաքանը՝ Արցախի իշխան Հասանի կինը։ Էլիկումին հաջորդում է ավագ որդին՝ Բուրթել Մեծը (1300-1348թթ.)։ Բուրթել իշխանի կինն էր Վախախը, որի գործունեությանը մենք ևս կանդրադառնանք։

1 **Գրիգորյան Գ.**, **Հախվերդյան Ս.**, Սյունիքի պատմություն, Երևան, 2001,էջ 94։

Սյունյաց իշխանության ղեկը Բուրթելից հետո անցել է նրա որդի Բեշքենին (1348-1377թթ.): Օրբելյաններից նշանավոր էին նաև Տարսայիճ մեծ իշխանի եղբայր Իվանեի որդի Լիպարիտը, որն ամուսնացած էր Նանայի հետ և ուներ 5 զավակ, որոնցից հայտնի է Չեսարը: Չեսարը իր կնոջ՝ Խորիշահի հետ կառուցել է Սելիմի քարավանատունը: Օրբելյաններից նշանավոր էր նաև Ռուստամ Օրբելյանը, որի գործունեությունը մանրամասն չենք անդրադառնում, քանի որ տեղեկություններ չունենք նրա ժամանակաշրջանի կանանց գործունեության մասին:

Օրբելյանների կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Տարսայիճ Օրբելյանի երկրոդ կնոջ՝ Մինա խաթունի և դստեր՝ Ասփայի շինարարական և նվիրատվական գործունեության մասին պահպանվել են մի շարք հավաստի տեղեկություններ:

Ջալալյանի, Ալիշանի, Հովսեփյանի աշխատություններում, դիվան հայ վիմագրության 3-րդ պրակի մեջ բազմաթիվ տեղեկություններ կան Տարսայիճ Օրբելյանի կնոջ՝ Մինա խաթունի շինարարական գործունեության վերաբերյալ: Սակայն Ստ. Օրբելյանը տեղեկություններ չի հաղորդում Մինա խաթունի մասին: Մինա խաթունը Տարսայիճ Օրբելյանի երկրորդ կինն էր, իսկ Ստեսփանոս Օրբելյան պատմիչը առաջին կնոջ՝ Արզու խաթունի որդին էր: Ըստ որոշ տեղեկությունների Տարսայիճ Օրբելյանը Մինա խաթունի հետ ամուսնացել էր Արզու խաթունի կենդանության ժամանակ, հավանաբար այն պատճառով, որ Արզու խաթունն այլազգի էր, իսկ Մինա խաթունը նշանավոր Ջալալ Դոլայի դուստրն էր: Ուստի այն հետապնդում էր նաև քաղաքական շահ:

Տարսայիճ Օրբելյանն ու Մինա խաթունը 1272 թվականին միասին կառուցել են Ըղուերձի Աստվածածին եկեղեցին[1]: Հնում Ըղուերծ անունով երկու գյուղ է գոյություն ունեցել՝ մեկը՝ Հաբանդ գավառում, մյուսը՝ Ծղուկ, որոնց հարկի չափը եղել է 12 և 10[2]: Մինա խաթունին է վերագրվում Ծղուկի Ըղերձի եկեղեցու շինարարությունը: Դիվան հայ վիմագրության 2-րդ պրակում նշվում է, որ Ծղուկի Ըղերձը ներկայիս Դարաբասն է[3]: Ըղերձի այդ եկեղեցու արձանագրությունը այժմ չի պահպանվել: Արձանագրության մասին տեղեկանում ենք Շահխաթունյանցի աշխատությունից, որտեղ պահպանվել է արձանագրությունն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Յուսով ամենակալին Աստուծոյ ես Տարսայիճ իշխանաց իշխան որդի մեծին Լիպարտին, և ամուսին իմ Մինայ խաթուն դուստր մեծին Ջալալ Դօլին կողմնակալ յայսմ նահանգի զոր ետ մեզ ա՜ծ ի Բարկուշատայ մինչ ի դաշտն Դվնայ, շինեցաք Ածածածին ի հալալ արդեանց մերոց ի փրկութիւն հոգւոյ և երկարութիւն կենաց մերոց. տուաք ի պէտս սպասաւորաց Սունակայ տափին հողն, նահատակի հողն, և ներքին ծաղկոցն ի Շնհեր, ի Տաթևայ լուսագին. և կատարի ի տարին ժ՚ ժամ, ե՜ յայտութե՜, ե՜ զատկին վասն ինձ Տարսայիճիս և

1 **Հացունի Վ.**, Հայուհին պատմութեան առջեւ, Վենետիկ-Ս. Ղազար, 1936,էջ 227:

2 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 371, 375:

3 Դիվան հայ վիմագրության, պր. 2, Երևան, 1960, էջ 111:

Մինայ խաթունին. եթէ ոք ի մերոց կամ յօտարաց խափանեսցէ զսահմանեալս մեր, յժ՛ը հայրապետաց նզոված է, թուին չիա» (1272)[1]:

Այս նույն արձանագրությունը վկայակոչում է նաև Ջալալյանը, բայց նշում է, որ այն գրված է Խթրայ վանքում[2]:

Մինա խաթունի գործունեության մասին Վ. Հացունին գրել է. «Հիւրանոցք հին Հայաստանի մենաստանաց հետ կապուած էին սովորաբար, ուր կ՛իջեւանէին անցորդներ, գտնելով ձրի սնունդ ու բնակարան: Ատոնց համար եկամտներ ալ հաստատուած էին բարեսէր անձերէ, որոց մէջ եւս կ՛երեւին մեր տիկնայք, ոչ միայն իբրեւ նուիրատու, այլ նոյն ինքն հիմնադիր հիւրանոցաց: Ատոցմէ ծանօթ են՝ Մինա խաթուն, որ 1274-ին Սիւնեաց Եղեգիք աւանի մէջ կենակցին Տարսայիճի հետ կը կերտեն նոյնպիսի շինուած մը, յայտնի իրենց թողած արձանագրէն իսկ, որ անոր միակ մնացորդն է այժմ. «Աստուած շնորհաւոր առնէ դարբաս պարոն Տարսայիճի եւ ամուսնոյն իւրոյ Մինայ խաթունին. ի թվին Հայոց ՉԻԳ»[3]:

Խոսքն այստեղ վերաբերում է Եղեգիս ավանում կառուցված իշխանական տանը՝ Դարաբասին: Պատմական Եգեղիք կամ Եղեգիս ավանը Վայոց ձորի հնագույն բնակավայրերից է և, սկսած 9-րդ դարից, Սյունյաց գահերեց իշխանների նստավայրը: Ունեցել է ամուր և ընդարձակ բերդ՝ տեղավորված ավանի հյուսիսում ձգված բարձր և երկարավուն բլրաշարի վրա, որի սրբատաշ քարերով շինված պարիսպներն ու դարպասը մինչև այժմ էլ կանգուն են: Տեղացիներն այս բերդն անվանում են «Սմբատա բերդ»: Այս ամուր բերդը չի կարողացել գրավել նույնիսկ արաբ զորավար Նըսրն: Եղեգիսը հիշվում է որպես գյուղաքաղաք և նույնիսկ՝ մայրաքաղաք: Եղեգիսի ծաղկման երկրորդ շրջանը զուգադիպել է 13-րդ դարին Օրբելյանների տիրապետության շրջանին: Այս ժամանակ ևս Եղեգիսը մնացել է որպես իշխանական նստավայր, որտեղ կառուցվել են տներ, եկեղեցիներ, բազմաթիվ որմնափակ խաչքար-հուշարձաններ և այլն, որոնք տեղավորված են եղել ավանի՝ գերազանցապես արևելյան մասում՝ ձորի ամենալայն տեղում[4]:

Եղեգիսի ս. Նշան եկեղեցու մոտ՝ հարավային կողմում պահպանվել է իշխանական տան (դարապաս) մուտքի կամարակալ քարը հետևյալ արձանագրությամբ.

ԱԾ ՇՆՈՐՀԱՒՈՐ ԱՆԷ ԴԱՐԱԲԱՍ ԲԱՐՈՆ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ, ՄԻՆԱՅ| ԽԱԹՈՒՆԻՆ ԻՒՐ ԱՄՈՒՍՆԱՒ ԹՎ:ՉԻԳ: (1274)[5]

Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը նշում է, որ Դարաբասից մնացել է միայն դռան մեծ կամարակալ քարը՝ Տարսայիճի և Մինա Խաթունի հարթա-

1 Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Աշխատասիրութեամբ **Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց** շահրիարցւոյ միաբանի սրբոյ Էջմիածնի, Հ. Երկրորդ, Ի Ս. Կաթուղիկէ Էջմիածին, 1842=ռմղա, էջ 364: (Այսուհետև՝ Շահխաթունեանց):

2 Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Աշխատասիրութեամբ **Տեառն Սարգսի Սանահնեցւոյ Ջալալեանց** թեմական Արք եպիսկոպոսի Հայոց Վրաստանի, Իմերեթի և այլոց: Մասն Բ, 1858, Տփղիս, էջ 208:

3 **Հացունի Վ.**, նշվ. աշխ., էջ 232:

4 **Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 48-49:

5 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 371, 375:

քանդակներով և արձանագրությամբ: Այս հարթաքանդակը տեսել և նկարագրել են Ջալալյանը և Քաջբերունին, որոնցից և քաղել է Ալիշանը: Գ. Հովսեփյանը շատ մանրամասն նկարագրում է հարթաքանդակը. «բայց վերջերս կորած էր համարւում այն: Երկու անգամ հետամուտ եք եղել գտնել այդ քարը, բայց ի զուր: Վերջապես յաջողուեցաւ գտնել Էրդափինցի ծերունի Յովհաննէս Գէորգեանի ցուցմամբ: Գիւղի թուրքերից մէկը քարը կոտրել, երեք կտոր է արել և շարել իւր պարտէզի ցանկապատի քարերի մէջ: Բարեբաղտաբար կարելի է ամբողջութեան մասին գաղափար կազմել՝ կտորներն իրար մօտ բերելով: Մոռացել ենք նշանակել քարի մեծութիւնը: Լուսանկարչական պատկերը ցոյց է տալիս, որ Ջալալյան չափազանցութիւններ է արել իւր նկարագրությեան մէջ: Քաջբերունին եւս սխալւում է խոյր տեսնելով Մինա Խաթունի գլխին: Կողք կողքի առանձին առանձին աթոռների վրայ նստած են Տարսայիճ և Մինա Խաթուն: Տարսայիճ թագ ունի գլխին, որի յետեւիվ կախուած զոյգ արտախուրակները, ոլորուն և փունջաւոր: Կախուած են եւ ուրիշ ժապաւէնաձև զարդարանքներ, որ պարզ չեն: Քարն այնքան մաշուած է, որ տարաբաղդատաբար հագուստի մանրամասնութիւնները նկատելի չեն, բայց երկար է, լայն և ծանծկում է մինչեւ ոտները: Աթոռը բաձրաթիկունք չէ. երեւում են միայն վերին երկու ծայրերը: Տարսայիճ ունի ոլորուն ընչացք եւ երկար միրուք: Աջ ձեռքը դրել է կրծքին, իսկ ձախը ծնկան վերայ: Այս քանդակը լուսանկարել եւ հրատարակել է յետոյ նաեւ Ե. Լալայեան, Ազգ. հանդէսի մեջ, 1913-ից յետոյ: Նոյն ձեւով և նման աթոռի վերայ բազմած է Մինա Խաթուն: Ներքնազգեստը ծածկում է մինչեւ ոտները, որոնց ծայրերը երեւում են քղանցքի տակից: Վերան ձգել է զարդարուն վերնազգեստը նոյնպէս ամբողջ հասակի երկարութեամբ: Պարանոցին կրկնակի մանեակ է կախած: Գլխի զարդարանքը չի որոշւում, բայց քառանկիւնի խոյր չէ, ինչպէս Քաջբերունին է կարծել: Հաւանօրեն արաղչինաձեւ գլխարկ էր ճակատը զարդարուն եւ շղարշով ծածկուած: Մինա Խաթունը աջ ձեռքը դրել է ծնկան վերայ, իսկ ձախը նկատելի չէ, քարի կոտրուած լինելու պատճառով: Երկուսն էլ բոլորակ լուսոյ պսակ ունին գլխներին: Հարթաքանդակն առնուած է շրջանակի մէջ, վերից մի աղեղ ներքեւից կտրուած է հորիզոնական, զարդարուն գարնէզով՝ մանր, իրար հիւսուած կիսաբոլորակներից կազմուած: Կիսաբոլորակ շրջանակն առանց զարդարանքի՝ վերած գրուած է.

Ա6. շնհաւորոր անէ դարաբաս պարոն Տարսայիճին և Մինայ Խաթին իւրեան ամ:

Քարի ներքեւի մասն ամբողջապէս զարդարուած է երկրաչափական վեցանկիւնանի աստղաձեւերից, կեդրոններում մի երկրորդ վեցանկիւնուց դէպի անկիւներն արձակուած եռատերեւներով: Աստղաձեւերի միջին տարածութիւնը զարդարուած է զոյգ գծերի հիւսուածքից եւ իրար դէմ արձակուած եռատերեւներով»[1]:

1 **Գարեգին կաթողիկոս Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիա-Լիբանան-1969, էջ 433:

Այժմ անդրադառնանք Նորավանքում Մինա խաթունի նվիրատվական գործունեությանը: Նախ նշենք, որ Նորավանքը Օրբելյան տոհմի նշանավոր հոգևոր կենտրոնը և տոհմական տապանատունն էր: Նյութը շարադրելիս մեզ համար սկզբնաղբյուրային նշանակություն է ունեցել Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսիական» աշխատությունը, որը նշանավոր պատմահայր, հոգևոր գործիչն ավարտին է հասցրել Նորավանքում՝ 1299 թվականին: Մեր պատմահայրը մահկանացուն կնքելուց հետո թաղվել է վանքի գավիթում: Բացի այդ, այստեղ է ստեղծագործել նաև մեր նշանավոր մանրանկարիչ Մոմիկը, որ Թամթա խաթունի պատվերով խաչքար է կերտել իր որդիներ Բուրթելի և Բուղտայի հիշատակին:

Նորավանքի ներկա բոլոր շինությունները կառուցված են Օրբելյան իշխանական տան անդամների կողմից և, ընդհանրապես, Նորավանքի ծաղկումն էլ հենց Օրբելյանների տոհմի հետ է կապված: Վանքի գլխավոր հուշարձանները գտնվում են մի ընդարձակ բակում՝ շրջափակված բարձր պարիսպներով: Վանքի հուշարձաններից են Ս. Կարապետ գմբեթավոր եկեղեցին, Գավիթը, Սմբատի դամբարանատունը, Բուրթելաշեն եկեղեցին: Նշված շինություններից մեզ հետաքրքրում է Սմբատի դամբարանատունը (ս. Գրիգոր), որը մի փոքրիկ թաղակապ եկեղեցի է, կառուցված ս. Կարապետի հյուսիսային կողմում: Կառուցել է տվել Տարսայիճ Օրբելյանն իր եղբայր Սմբատի համար՝ որպես տապանատուն, բայց հետագայում այնտեղ են թաղել նաև Տարսայիճին և Օրբելյան տոհմի այլ նշանավոր անձանց: Այստեղ եղած տապանաքարերը շինված

են սպիտակավուն քարից: Այս դամբարանատունը կառուցել է վարդապետ-ճարտարապետ Սիրանեսը 1275 թվականին:

Մինչև այժմ Նորավանքի որմերից, խաչքարերի, տապանաքարերի և առանձին բեկորների վրայից հավաքվել, վերծանվել և հրապարակվել են 187 արձանագրություններ, որոնցից շուրջ 24-ը նվիրատվական բնույթի են[1]: Այժմ անդրադառնանք Նորավանքում պահպանված Մինա խաթունի նվիրատվական արձանագրությանը, որը գտնվում է Սմբատի դամբարանի հյուսիսային պատի արևելյան կամարի մեջ: Արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը.

ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ ԱՅՍ ԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ԱՐՁԱՆ ԱՆՁ|ՋԵԼԻ ՄԻՆԱ ԽԱԹՈՒՆԻՍ Է. ԴՍՏԵՐ ՄԵԾԻ ԱՐՔԱՒԻՆ ՁԱԼԱԼԻՆ ԵՒ ԱՄՈՒՄՆՈ ՄԵԾԱՁ|ԳԻ ԻՇԽԱՆԻՆ ՏԱՐՍԱՒՃԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴՈՅՍ ՁԱԼԱԼԻՍ. ՈՐ ԳՆԵՑԱՔ Ի ՄԵՐ ՀԱԼԱԼ ԸՆՉԻՑ Ձ|ՆՈՐՊԵՏԻՆ ԱՅԳԻՆ Ի ՎԷԴԻ ԵՒ ՁԱՅԼՆ Ի ԿՈՐԴՈ ԳՆԵՑԱՔ Ի ՀԱՅՐԵՆԱՏԻՐԱՑՆ ԵՒ ՏՆԿԵՑԱՔ ԵՒ Բ|ՈԼՈՐԵՑԻ Ձ:Դ: ԴԵՀՆ:Ա: ՃԱԿԱՏՆ ԲՆԱՇԱՀ ՌԱՀՆ ՈՒ ԻՐ ՊԱՁՈՒՄԻՆ ԱՅԳԻՆ,:Ա: ՃԱԿԱՏՆ ԻՐԻՑ|ԻՆ ԱՅԳԻՆ ՏԵՂՆ:ԺԲ: ԳՐՎԻ ՁՈ|Ր ՅԱՌԱՋ ԱՅԼ ՏՎԱԾ ԷՐ ՎԱՆԻՑՍ ՄԵՔ ՄԵՐ ՅԱՒԺԱՐՈՒԹԵԱՄԲ ՎԵՐՍՏԻՆ ՏՎԱՔ Ի ՆՈՐԱՎԱՆՍ ՅԱՒԱ|Գ ՍԲ ՆՇԱՆՍ ԵՒ Ի ՏՐ ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՄՆ ՀՈԳԵՑ ԱՐՔԱՅԱՇՈՒՔ ՏԵԱՌՆ ԻՄՈ ՏԱՐՍԱՒՃԻՆ. ԻՍԿ ՏՐ ՍՏԵՓԱՆՈՍ ԵՒ ՄԻԱԲԱՆ ԵՂԲԱՐՔՍ ԿԱՐԳԵՑԻՆ ՆՄԱ ՅԻՇԱՏԱԿ ԱՆՁԻՆՁ ՁՏԱՒՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ. ԶԻ ՅԱՅՆՄ ԱՒՈՒՐ ՀԱ|ՆԴԻՍԻՒ ԱՒՐՀՆԵՍՑԵՆ ԶՇԻՐԻՄՍ ՆՈՐԱ ԵՒ:Ժ: ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՉԻ, ԵՒ ԱՅՍ ՏՈՒՐՔՍ ՈՉ Ի ԶՐԿԱՆԱՑ ՈՉ Ի Գ|ԵՂԷ, ՈՉ Ի ՊԱՐՈՆԱՀՈՂՈ ԱՅԼ ՄԵՐ ՀԱԼԱԼ ԴՐԱՄԱԳԻՆ՝ ԱԶԱՏ ՅԱՄԷՆ ՅԱՐԿԱՑ. ՈՐ ՈՉ ՈՒՄ ՀԱՇԻՒ ՉԿԱ Ի ՀԵՏ: ԱՐԴ ԹԷ Ի ՄԵՐՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱԾ ԿԱՄ ՅԻՇԽԱՆԱՑ ԿԱՄ Ի ՁԵՌՆԱՈՐԱՑ ՁԻՆՉ ԵՒ ԻՑԷ ՊԱՏՃԱՌԱՒ ՆԵՆԳԵԼ ԿԱՄ| ՀԱՆԵԼ ՁԱՆԱՆ ՁԱՅՍ ԱՅԳԻՍ Ի ՆՈՐԱՎԱՆԻՑ ԿՏՐԵԱԼ ԼԻՑԻՆ ՆՈՔԱ ՅԵՐԿՈՒ ԿԵՆԱՑ, ԸՆԴ ԱՒՁԻՆ ԵՒ ԸՆԴ ՍԱՏԱՆԱՒ ՆՁՈՎԵԼ ԵՂԻՑԻ ՅԱՄԵՆԱԿԱԼ ԲԵՐԱՆԷՆ ԱՅ. ՁԿԱՅԵՆԻՆ, ՁՅՈՒԴԱՅԻՆ, ՁՅՈՒԼԻԱՆՈՍԻՆ ԱՌՁԷ ՎԱՐՁ ՏԺ ԸՆԴ ՎԱՍ|ԱԿԱ ՈՒՐԱՑՈՂԻՆ ԴԱՏԵՍՑԻ, ՅԵՐԻՑ ՍԲ ԺՈՂՈՎՈՅՆ ԵՒ ՅԱՄԷՆ ՍՐԲՈՑ ԱՆԻԾԵԱԼ ԼԻՑԻ Ի ՄԱՀ ԵՒ Ի ԿԵԱՆՔ ԵՒ ԹԷ ՏԱՃԻԿ| ԱՒԱԴ ՓՈԽԻ ԵՒ ՀԱՆԵԼ ՁԱՆԱ:Ռ::Ռ::Ռ: (1000 1000 1000) ՆԱԼԱԹ ԼԻՆԻ, ՅԻՒՐ ՄԱՀՄԵՏԷՆ ԱՊԻՁԱՐ ԼԻՆԻ: Ի ԹՎԻՍ:ՉԽԱ: (1292): ՀԱՍՏԱՏ Է ԳԻՐՍ ԿԱՄԱՒԻՆ ԱՅ:[2]

Արձանագրությանը անդրադարձել է նաև Ղ. Ալիշանը:[3] Արձանագրությունից պարզ է դառնում, որ Մինա խաթունը 1292թ. Վեդիում գնել է Նորպերտի այգին և այն նվիրել Նորավանքի ս. Նշան եկեղեցուն: Արձանագրությունից նաև պարզ է դառնում, որ Մինա խաթունն այն գնել էր «մեր հալալ դրամագին՝ ազատ յամէն յարկաց» և նաև սահմանել էր նվիրատվական արձանագրություններին բնորոշ անեծքի բանաձև:

Ի դեպ, Մինա խաթունի մասին Հացունին գրել է. « Իսկ 1298ին ինք կ՛երթայ հանգչելու նոյն մենաստանին մէջ, ուր ցարդ կը խօսի պերճօրէն իւր մահարձանը»:[4]

Մինա խաթունի դուստրը՝ Ասփան, մորից ժառանգել էր շինարարական ու

1 **Սարգսյան Գ.**, Նորավանքի նուիրատվական արձանագրութիւնները եւ մի տեղադրութեան ճշգրտման փորձ, Նորավանք, Բ հրատ., Մոնրէալ-Երևան, 2001, էջ 77:

2 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 239:

3 Սիսական, Տեղագրութիւն Սյունեաց աշխարհի, ի հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշան, Վենետիկ, Ի Մխիթարայ Վանս, Ի Ս. Ղազար, 1893, էջ 191-192:

4 **Հացունի Վ.**, նշվ. աշխ., էջ 198:

նվիրատվական այդ ձիրքը և հարս գնալով Խաչեն՝ զբաղվել հայրենանվեր գործունեությամբ:

Տարսայիճ Օրբելյանի և Մինա խաթունի դուստր Ասփան ամուսնացած էր Դոփյան տոհմից Գրիգորի հետ: Սյունեցի այս իշխանուհին հարս գնալով Արցախ, այնտեղ ձեռնարկել է շինարարական և նվիրատվական գործունեություն: Իր գործունեությունը հավերժացնող բոլոր արձանագրություններում Ասփան նշում է, որ դուստրն է «արքայաշուք Տարսայիճի» և «թագազարմ Մինա խաթունի»:

Ասփան Խաթրա վանքում կամ Խթրավանքում, որը Դոփյան ցեղի գերեզմանատունն է, կառուցել է բեմի սեղան, ինչի մասին վանքի ներսում՝ բեմի երեսին, թողել է արձանագրություն: Վանքի անունը արձանագրություններում և աղբյուրներում հիշատակվում է Խադարի կամ Խադայի վանք, բայց գրվել է նաև Խաթրա վանք կամ Խթրավանք, որը ժողովրդական արտասանության հետևանք է:[1]:

Խաթրա վանքի արձանագրությունը, որտեղ նշվում է Ասփայի կողմից բեմի սեղանի կառուցման մասին, ունի հետևյալ բովանդակությունը.

«Շնորհիւ Քրիստոսի ես Ասփէ դուստր արքայաշուք իշխանին Տարսայիճի, թագազարմ մաւրն իմոյ Մինա խաթունին, նպաստ եղեալ քրիստոսապսակ գլխոյ իմոյ մեծափառ իշխանին Գրիգորի սուրբ եկեղեցւոյս, կամեցայ ի ձեռն քահանայապետին մեծի տեսան Յովհաննիսի՝ զիմ յարդար ընչից կանգնեցի Բեմի սեղան ի զենմանն Քրիստոսի, զի ամենայն կիրակէ և շաբաթ տաւն ծննդեան և տեառնընդառաջին, զատկի, զվարդավառին, աստուածածնին և սուրբ խաչի ինձ կատարի պատարագ զամեն եկեղեցիքս, որ և տուի զմեր խաս հողն Բլրի հանդի զսենեկպան. ա. բահի ջուր, թէ ոք ի մերոյ կամ զպատարագն խափանէ, ի փառաց որդւոյն Աստուծոյ, որոշեալ եղիցի»[2]:

Այս արձանագրությունը հրատարակել են Շահխաթունյանցը[3], Ջալալյանցը[4] և Բարխուտարեանցը: Դիվան հայ վիմագրության 5-րդ պրակում նշվում է, որ արձանագրության տեղադրությունը նշել է միայն Բարխուտարեանցը, որը սխալ է, քանի որ բեմի ճակատը զբաղեցրել է այլ արձանագրություն: 3 հրատարակիչներն էլ՝ Շահխաթունեանց, Ջալալեանց և Բարխուտարեանց, արտագրել են իրարից, իսկ բուն աղբյուրը Եսայի կաթողիկոսի ձեռագիրն է, որում ստույգ տեղադրություն չկա նշված, այլ միայն գրված է՝ «Խաթրայ վանուց արձանն է»[5]:

Խթրայ վանքի արձանագրություններից մեկն էլ հիշատակում է Ասփայի կողմից կամուրջի կառուցման մասին: Արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը.

«Կամաւն Աստուծոյ ես Ասփայ դուստր մեծ իշխանին Տարսայիճին և Մինախաթունին և ամուսին Հսկազաւր իշխանին Գրիգորի որդւոյ մեծ իշխանին

1 Դիվան հայ վիմագրության, պրակ 5, կազմեց **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1982, էջ 121:

2 Արցախ, երկասիրեց Մակար եպիս. Բարխուտարեանց, Բագու, 1895, էջ 194-195: **Սարգիս Ջալալեանց**, 1842, էջ 206:

3 Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Աշխատասիրութեամբ **Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց** շահրիարցւոյ միաբանի սրբոյ Էջմիածնի, Հ. Երկրորդ, Ի Ս. Կաթուղիկէ Էջմիածին, 1842=ռմղա, էջ 362: **Սարգիս Ջալալեանց**, Հ. 1, էջ 206:

4 **Սարգիս Ջալալեանց**, Հ. 1, էջ 206:

5 Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 129:

Հասանայ քաջի Տեառն Աղուանից կանգնեցի զխաչս. շինեցի զկարմունջս. յիշատակ հոգւոյ մերոց անցնելոց ներկայից և ապագայից»[1]:

Ասփայի կողմից բեմի սեղանի և կամուրջի կառուցումը վկայող վիմագիր արձանագրությունները չեն պահպանվել, և Դիվան հայ վիմագրության 5-րդ հատորում դրանք զետեղվել են Եսայի կաթողիկոսի ձեռագրի արտագրությունից, և նշվում է, որ վանքի և Վաղուհաս գյուղի արանքում՝ Թարթառ գետի վրա, մնում են այդ կամուրջի խելերը, իսկ ձախ ափին՝ ժայռերի վրա, կրաշաղախի տեղերը, որտեղ էլ կանգնեցված է եղել խաչքարը[2]:

Սակայն ինչպես նշում է կաթողիկոս Գ. Հովսեփյանը, Ասփայի բարեգործության ամենամեծ հուշարձանը Թարգմանչաց ավետարանն է: Ձեռագիրն այդ անունը ստացել է Գանձակի մոտ գտնվող Թարգմանչաց վանքում պահվելու պատճառով[3]: Ըստ Հովսեփյանի՝ Ավետարանը գրված է 1202 թվականին երկաթագրով, Տիրացու գրչի ձեռքով: Ծաղկողը Գրիգոր երեցն էր, առաջին ստացողը Հովհաննես ավագերեցը, իսկ Ասփան երկրորդ ստացողն էր:[4] Ավետարանը տեղեկություններ է հաղորդում Ասփայի, Գրիգոր իշխանի, Դոփեանց մյուս իշխանների մասին, իսկ Ղուկասի վերջում գրված է. «Զմեծ եւ զամենաւրհնեալ պարոնաց պարոն զԳրիգոր որդի Դոփին եւ զամենագովելի զբարեպաշտ ամուսին իւր զպարոն Ասփայն, զստացողք եւ զարդարիչք սուրբ աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս»:[5] Մատթեոսի վերջին հիշատակարանում էլ նշվում է, որ Ասփան զարդարել է «զանազան սպասիւք եւ շինուածիւք զեկեղեցիս Հայաստանեայց, ստացաւ եւ սուրբ աւետարանս յարդար ընչից իւրոյ եւ ընծայեաց ի սուրբ ուխտն Խադարի», որ Դոփեանց գերեզմանատունն էր[6]:

Վայոց ձորում կան մի շարք արձանագրություններ, որոնք տեղեկություններ են հաղորդում տարբեր շինությունների կառուցման և խաչքարերի կանգնեցման ժամանակ կանանց մասնակցության մասին: Այսպես, Արփա հին գյուղատեղի դիմաց՝ գետի աջ ափին՝ «վարդապետի հող» կոչված վայրում, կա մի խաչքար, որի վրա նշված է Սողոմոնի որդի Սարգիսի և նրա կնոջ՝ Աբիքի կողմից 1303 թվականին խաչի կանգնեցման մասին: Ի դեպ, արձանագրության մեջ նշվող տիկնոջ՝ Աբիքի անունը Ալիշանը վերծանել է Աբէժա:[7] Սակայն Դիվան հայ վիմագրության 3-րդ հատորում արձանագրության գրչագրից ակնհայտ կարդացվում է Աբիք անունը: Ահա այդ արձանագրության տեքստը.

ՅՈՒՍՈՎ ՈՂՈՐՄԱԾԻՆ ԱՅ. ԵՒ Ա| ԻԺ[Ա]ՆԴԿՈՒԹԲ. ՏՆ. ԻՄՈՅ ՏՐ. ՍՏԵՓԱՆ| ՆՈՍԻ, ԵՍ ՍԱՐԳԻՍ, ՈՐԴԻ ՍՈՂՈՄՈՆԻ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ| ԱԲԻՔՍ ԿԱՆԳՆԵՑԱՔ ՁԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹ[Ի] ՄԵԶ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՅ. ԹՎԻՍ:ՉԾԲ[8]:

Հերհերի ս. Սիոն վանքի արձանագրություններում ևս հիշատակություններ կան շինարարություն և նվիրատվություն կատարած կանանց մասին: Նախ մինչև Հերհերի ս-բ Սիոն վանքի արձանագրություններում հիշատակված սյունեցի կանանց անդրադառնալը, փորձենք պարզել վանքի տեղադրությունը և կառուցվածքը, ապա փորձենք վերլուծել արձանագրությունները:

1 **Ջալալեանց Ս.**, 1842, էջ 206
2 Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 130:
3 **Գարեգին կաթողիկոս Յովսէփեան**, նշվ. աշխ., էջ 435:
4 Նույն տեղում, էջ 436:
5 Նույն տեղում, էջ 436:
6 Նույն տեղում, էջ 436:
7 **Ալիշան Ղ.**, էջ 184:
8 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 33:

Հերհերի ս-բ Սիոն վանքը գտնվում է Վայոց Ձորի Հերհեր գյուղից մոտ 1 կմ հյուսիս-արևելք՝ երկու ձորերով եզերվող բլրակի գագաթին: Այս հուշարձանի հիմնադրման և պատմության վերաբերյալ բանասիրության մեջ երկու սխալ կարծիք կա՝ երկուսն էլ հիմնված Ստ. Օրբելյանի հաղորդածի սխալ մեկնաբանման վրա: Պատմագիրը, նկարագրելով Սիոնի վանքը, նրա հիմնադրման մասին գրում է. «...ի մեծ բարեպաշտուհւոյն Վարազդխտոյ՝ Սիւնեաց տիկնոջէ յառաջ քան զհայ թուականն»: Ալիշանը և Լալայանը, հավանաբար, շփոթելով Սիւնի և Սիոն կոչումները, պատմագրի խոսքերը վերագրել են Հերհերի այդ հուշարձանին: Սիւնի վանքը գտնվում է պատմական Ծղուկ գավառում:[1]

Ըստ Հ. Եղիազարյանի՝ վանքի հյուսիսային կողմի եկեղեցին կոչվում է ս. Սիոն և այն ամենահին ու ամենասկզբնական կառույցն է: Շենքի կառուցվածքային առանձնահատկությունները՝ կենտրոնագմբեթ, խաչաձև հատակագիծը և բազիլիկատիպ որոշակի ձևերի միացումը վկայում են կառույցի՝ 6-7-րդ դարերում կառուցված լինելը[2]: Իսկ Դիվան հայ վիմագրության 3-րդ պրակում սկզբնական կառույցը կոչվում է ս. Հովհաննես, որը կառուցված է կոփածո քարերով, ինչի պատճառով էլ զուրկ է արձանագրություններից[3]: Երկրորդ եկեղեցին կից է ս. Հովհաննեսին հյուսիսից և նույնպես անարձանագիր է, իսկ երրորդ եկեղեցին, որը մեզ հետաքրքրում է, ս. Աստվածածինն է և կից է ս. Հովհաննեսին հարավից:

Վանքի ընդարձակ բակի հյուսիսային մասը փոս է, որտեղ պահպանվել են բազմաթիվ խցերի և տնտեսական այլ շենքերի մնացորդներ, իսկ արևմտյան մասում տարածվում է գերզմանատունը, որտեղ կան բազմաթիվ տապանաքարեր և խաչքարեր՝ մի մասը արձանագրություններով: Վանքը հյուսիսից և արևմուտքից շրջապատված է եղել պարիսպներով, իսկ մյուս երկու կողմից պաշտպանվել է խոր ձորերով[4]:

Այժմ համառոտ անդրադառնանք մեզ հետաքրքրող Ս. Աստվածածին եկեղեցու կառուցմանն ու կառուցվածքին:

Ինչ վերաբերում է Ս. Աստվածածնի կառուցմանը, ապա ներսի հարավային պատի վրա փորագրված ընդարձակ արձանագրության համաձայն՝ եկեղեցին կառուցել է Մագիստրոսի թոռ, Վասակի որդի Պարոն Վահրամը 1282-1283թթ.: Եկեղեցու արևմտյան պատի ճակատամասում քանդակված է Օրբելյանների տոհմանիշը[5]:

Ս. Աստվածածին եկեղեցին ամբողջությամբ կառուցված է սրբատաշ քարերով, ներքուստ և արտաքուստ ունի բազմաթիվ արձանագրություններ: Հենց այդ արձանագրություններում կան հիշատակություններ կանանց շինարարական ու նվիրատվական գործունեության վերաբերյալ: Այժմ անդրադառնանք այդ արձանագրություններին:

Հերհերի Սիոնի վանքի Ս. Աստվածածնի հարավային պատի ամբողջ երկարությամբ, մասամբ նաև արևմտյան և բեմի պատերի արձանագրության մեջ հիշատակվում է Վասակի որդի Վահրամի և իր տիկնոջ՝ **Սանդուխտի** կող-

1 Նույն տեղում, էջ 48:

2 **Եղիազարյան Հ.**, Հերհերի Ս. Սիոն և Ս. Գևորգ անապատները և դրանց վիմական արձանագրությունները, Էջմիածին, 1974, սեպտեմբեր, էջ 43:

3 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 33:

4 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 48:

5 **Եղիազարյան Հ.**, նշվ. աշխ., էջ 44:

մից 1283 թվականին եկեղեցու շինարարության և սպասքի նվիրատվության մասին: Ահա այդ արձանագրության տեքստը.

ԿԱՄԱՒ ՀՁԱՒՐԻՆ ԱՅ. |ԱՅՍ ԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ԱՐՁԱՆ ԱՆՁՆՁԵԼԻ ԱՐՔԱՅԱՇՈՒՔ ՊԱՐՈՆԻՆ ՎԱՀՐԱՄԱՅ, ՈՐԴՈՅ ՎԱՍԱԿԱՅ. ԹՈՌՆ ՄԵԾԻՆ ՄԱԳԵՍՏՐՈՍԻ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏՈՀՈՅ ՍԱՆԴՂՏՈՅ ԱՄՈ[ԻՈՆ]ՈՅ ԻՒՐՈՅ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ| ՊՏՂՈՅ ՆՈՅԱՅ ՈՒՔԱՆԱՅ, ԵՒ ՔԱՁԱՁԱՒՐԻՆ ԵՒ ՄԵԾ ԱՍՊԱՐԱՊԵՏԻՆ ՎԱՐ[Հ]ԱՄԱ. ԵՒ ՔՍԱՍԵՐ ՄԱՒՐՆ ԻԵՐՈ| ՄԱՄՔԱՆԱՅ, ԵՒ ԲԱՐԵՏՈՀՄԻԿ ԱՒՐԻՈՐԴ ԱՄՈՒՍԼՈՅ ԻՒՐՈՅ ԳՈՆՑԱԻՆ, ՈՐ ՄԵԾԱՁԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՇԻՆԵՑԻՆ ՁԵԿԵՂԵ|ՑԻՍ [ԵՒ] ԲԱՁՈՒՄ ՍՊԱՍԻՒՔ ՁԱՐԴԱՐԵՑԻՆ՝ ՅԱՂԱԳՍ ԱՐՔԱՈՒԹԵ. ՅՈՒՍՈՒՅՆ ԵՒ ԵՐԿԱՐՈՒԹԵ ԿԵՆԱՑ ԻՒՐԵԱՆՑ ԵՒ ՁԱՐՄԻՑՆ ԻՒՐԵԱՆՑ ՈՒՔԱՆԱ| [ԵՒ ԵՏՈՒՆ]. . . . . .ՆՈՒԵՐՍ Ի ՍԲ ՈՒԽՏՍ ՁԱՔԱՐԱԹԱՂԻՆ ԱՅԳԻՆ ՎԵՐԻՆ ՀԱՏՈ[ՎՆ]. . . . . ԿՈՌ ԱՐՏՈՎՆ. . . . ԵՁՐՆ, ՈՐ ՄԵԾ ԱՌ[Ո]ԻՆ ԳՆԱԼԱ| . . . . . ԾՆ. . . ԸՆԴՈՅՁԻՆ. ՅԻՐԻՑԱԿԱԼԵՐՆ:Գ: ՀՈՂՈՇ[Ե]ՐՏ. . . . . ՉԵՑ ԱՐՓԱ . . . .|ԿՈՂՃԻՔՆ ՄԻՆՉԵՒ Ի ՎԱՆՔՆ|. . . . . ՀԱՏՈՂԱՔԲԱՐ ՊԱՐՈՆԱՑՆ:Դ: ՊԱՏԱՐԱԳ ՈՒՔԱՆԱՅ . . . . . ՁԱՏԿԻՆ:Դ: ՄԱՄՔԱՆ[ԱՅ] ՎԱՐԴ[ԱՎԱՌԻՆ]. . . . . ԻՆՉ ԵՏ ԱՍԷՆ. . . . . ԿԱՏԱՐ[ԱՐ]ԵՆ. ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ|. . . . ԴԱՏԱՍՏԱՆ[ԻՆ] ԵՒ ԹԷ ՅԱՆԴԸԳՆԻՆ . . . . . ՅԱՅ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ . . . . ՆՁՈՎ[ԱԾ ԵՂԻՑԻ] ՄԱՐՄՆՈՎ ԹՎ:ՉԼԲ: (1283) ԳՐԵՑԱՒ: [1]

Նույն Ս. Աստվածածնի հյուսիսային պատի արևելյան մասի արձանագրության մեջ հիշատակություն կա 1321 թվականին Ս. Հովհաննես եկեղեցուն Բերդավագի և իր տիկնոջ՝ Խաթունի նվիրատվության մասին.

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ԲԵՐԴԱՒԱԳՍ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ| ԽԱԹՈՒՆ ՁՍԲ ՅՈՎԱՆԷՍՍ Ի ՍԲ ՈՒԽՏՍ ՏՎԱՔ| ԶԻՆՉ ԱՅԼ ՀՈԳՈՅ ԲԱԺԻՆ ԿԷՐ. ՎԱՐԴԱՊԵՏ, ՄԻԱԲԱՆՔ:Բ: ՊԱՏ|ԱՐԱԳ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՅՈՎԱՆՈՒ ՏԱՒՆԻՆ:Ա: ԻՆՁ| ԲԵՐԴԱՒ[ԱԳԻՍ]:Ա: ԽԱԹ[ՈՒՆԻՆ]. ԿԱՏԱՐԻՉՔ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ Ի ԹՎ:ՉՀ: (1321)[2]

Այստեղ հատկանշականն այն է, որ Ս. Հովհաննեսի վանքին տրվող նվիրատվության մասին արձանագրությունը գրվել է Ս. Աստվածածին եկեղեցու պատին: Պատճառն այն է, որ Ս. Հովհաննես եկեղեցին կառուցված է կոփածո քարերով և զուրկ է արձանագրություններից:

Ս. Աստվածածնի հյուսիսային պատի արևմտյան մասի արձանագրության մեջ նշվում է, որ Հասանի դուստր Մամքանը 1318 թվականին ոսկե ապարանջանը տալով գնում է Ս. Սիոնի ներքևի հողը և այն նվիրում վանքին:

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՄԱՄՔԱՆ ԴՈՒՍՏՐ ՀԱՍԱՆԱ, ԻՄ ՈՐԴԻ| ՎԱՂԹԱՆԿ ՁԻՄ ՈՍԿԻ ԱՌՊՆՃԱՆԻ ԳՈՆԾԷՆ ՏՎԱՔ| ՁՍԲ ՍԻՈՆԻ ՏԱԿԻ ՀՈՂՆ ՎԱՐԴԱՊԵՏԵՆՑ ԱՌԱՔ. ՍԲ ՈՒԽՏՍ| ՏՎԱՔ: ՎԱՐԴԱՊԵՏ, ՄԻԱԲԱՆՔ:Բ: ՊԱՏԱՐԱԳ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԾԱՌ|ԶԱՐԴ[ԱՐ] ԻՆ:Ա: ԻՆՁ:Ա: ԻՄ ՈՐԴՈՅՆ ՍԵՒԱԴԻ, ՈՎ ԽԱՓ|ԱՆԷ ԴԱՏԻ ՅԱՅ. Ի ԹՎ.:ՉԿԷ: (1318):[3]

Ս. Աստվածածնի հարավային պատի արևմտյան մասի արձանագրության մեջ նշվում է նաև 1346 թվականին Վահրամ Շահուռնեցու տիկնոջ՝ Գոնցեի կողմից կատարված նվիրատվության մասին.

ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԲ ՄԵԾ ՊԱՐՈՆ ԲՈՒՐԹԷԼԻՆ ԵՒ| ՈՐԴՈՅ ԻՒՐՈՅ ԲԵՇՔԵՆԱ ԵՒ ԻՆԱՆԻԿԻՆ, ԵՍ ԳՈՆՑԷ ԱՄՈՒՍԻՆ ՎԱՀՐԱՄԱՅ,

1 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 51:
2 Նույն տեղում, էջ 53:
3 Նույն տեղում, էջ 56:

ՈՐԴՈՅ ՇԱՀՌՈՒՆԵ|ՑՈ, ԴՈՒՍՏՐ ԽՈՍՐՈՎԿԱ ՅԱՁԳԵ ՏԱՐ[Ս]ԱՒՃԵԱՆՑ ԵՏՈՒ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ԵՒ ՀԵ|ՐԵԱՆԵԱՑ ԻՄՈՅ Ի ՍԲ ՈՒԽՏՍ ՎԱՄՆ ՀՈԳԻՈՐԴԵԱՑ ԻՄՈՅ ՈՒՔԱՆԱ, ԱՄԱՏԻՆ ՈՐ ՏՂԱ [Ա]ԻՐԱՒՔ Ի| ՔՍ ԿԱՏ[ԱՐ]ԵՑԱՆ ԴԻՏԻ ՍԲ ԳԵՐԳՆ ԻՒՐ ՀԵՐԵՆԱՒՔՆ, ԻՒՐ ԽԱՉԻՆ ՄՏԱՒՔՆ Ի ՀԱՄԱՍԱ|ՏԷՄՆ ԶԳԱՁԱՐԱՓՈՍԻՆ ԷԴԻՆ:Բ::Ռ: ԴԵԿԱՆ ԳՆՈՒԱԾՔ ՈՒ:Ճ: ԴԵԿ[ԱՆ] ԳՆՈՒԱԾ| ԲԱՄԲԱԿ ՀՈՂ ԵՒ ՀԱՄԱՄԱՏԷՄՆ ՈՒ ԶՈՐՁԱՔԱՐԻՆ ՀՈՂՆ Ի ՅԱՂԶՐՏԱՊ ԵՒ ՄԻԱ|ԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ:ԺԲ: ՊԱՏԱՐԱԳ ՍԲ.ԽԱՉԻՆ ՏԱՒՆԻՆ:Դ: |ԱՄԱՏԻՆ:Դ: ՈՒՔԱՆԱ:Խ:-ԻՑ ՏԱՒՆԻՆ:Դ: ՊԱՏԱՐԱԳ:Բ: ԳՈՆՑԻՆ:Բ: ԹՈՒԽՏԵՆՈ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԵ[Ն] ՅԱՅ ԵՒ ԽԱՓԱՆՈՂՔՆ ԴԱՏԻՆ Ի ՏԷ: |ՈՎ ՀԱԿԱ[ՌԱ]ԿԱ ՄԵՐՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է ԱՌԱՋԻ ՔԻ ԹՎ:ՉՂԳ: (1346):[1]

Այս արձանագրությունից պարզ է դառնում, որ Վահրամ Շահռունեցու տիկին Գոնցեն՝ Տարսայիճի տոհմից Խոսրովի դուստրը, նաև 100 դեկանով բամբակ հող և Համամատեսի ու Զորձաքարի հողերն է գնել: Ի դեպ, նշենք նաև, որ Վահրամ Շահուռնեցին Օրբելյանների զորաբանակի հրամանատարն էր և Հերհեր գյուղն իր շրջակայքով որպես կալվածք ստացել էր Տարսայիճ Օրբելյանից:

Ս. Աստվածածնի արևմտյան պատի հյուսիսային մասի արձանագրությունը վկայում է Կարապետի և իր կնոջ՝ Տիկնանց Տիկնոջ կողմից վանքին նվիրատվության մասին.

ՍԲ ԳՐԻԳՈՐԻ ՏԱՒՆԻՆ ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ԿԱՐԱՊԵՏՍ ԵՒ ԱՄ|ՈՒՍԻՆ ԻՄ ՏԻԿՆԱՆՑ ՏԻԿԻՆ ՁՄԵՐ ՀՈԳՈՅ| ԲԱԺԻՆ Ի ՍԲ ՈՒԽՏՍ ՏՎԱՔ ՎԱՐԴԱՊԵՏ, ՄԻԱԲԱՆՔ:Բ: ՊԱՏԱՐԱԳ ՏՎԻՆ ՄԻՆ ԻՆՁ:Ա: ԱՄՈՒՄՆԻ ԻՄ ԿԱՏԱՐԻՉՔ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ. [2]

Թանատի կամ Թանահատի վանքում ևս պահպանվել են կանանց նվիրատվական և շինարարական գործունեությունը փաստող մի շարք արձանագրություններ: Մինչ այդ անդրադառնանք Թանահատի վանքի տեղադրության հարցին, քանի որ այն երկար ժամանակ վիճաբանության առարկա էր, և հետո միայն ներկայացնենք կանանց կողմից կատարված նվիրատվությունները փաստող արձանագրությունները:

Նախ ասենք, որ գոյություն են ունեցել երկու Թանահատի վանքեր և երկուսի եկեղեցիներն էլ կոչվել են ս. Ստեփանոս: Վանքի Թանահատ կամ Թանատ անունը, ինչպես և գլխավոր եկեղեցու ս. Ստեփանոս անունը պատմագիտական գրականության մեջ մի քիչ խառնաշփոթ են առաջացրել: Բանն այն է, որ Թանահատի վանքի տեղեկությունների հիմնական աղբյուրը Ստ. Օրբելյանի պատմությունն է: Ընդ որում, Ստ. Օրբելյանը Թանահատի վանքի մասին գրում է. «Առաջին գլուխն ամանեցունց վանորէից և աղբիւր շնորհաբաշխութեան տանն Սիսական՝ Տաթև.-ապա մեծ առաքինարանն Թանատէ վանս»[3]: Գոյություն ունեն երկու եկեղեցիներ Թանահատ անվամբ, որից հնագույնը՝ Սյունիքի Ծղուկ գավառում, իսկ մյուսը՝ Վայոց ձոր գավառում՝ կապված 8-րդ դարի նշանավոր մտավորական Ստեփանոս եպիսկոպոսի սպանության և այստեղ թաղվելու դեպքերի հետ: Երկար տարիներ Թանահատի այդ երկու վանքերից միայն մեկի՝ Վայոց ձորում գտնվածի տեղն էր ստույգ հայտնի, այդ պատճառով

1 Նույն տեղում,էջ 56:
2 Նույն տեղում, էջ 57:
3 **Օրբելյան Ս.**, նշվ. աշխ., էջ 248:

էլ պատմագիրների հաղորդած տեղեկությունները վերագրվում էին միայն Վայոց Ձորի Թանահատի վանքին:

Ծղուկ գավառում Ս. Բարխուդարյանի շնորհիվ գտնվեց պատմագրի նշած հնագույն Թանահատի վանքը, որի և՛ տեղադրությունը, և՛ արձանագրությունները, և՛ այլ մանրամասնություններ լրիվ համընկնում են Օրբելյանի նկարագրությունների հետ: Այսպիսով վերացավ Թանահատի երկու վանքերը միացնելու անտեղի շփոթը:[1]

Նախ ասենք, որ Սիսիանի Թանահատի վանքի փլատակների մաքրման և պեղման ժամանակ հայտնաբերվել է բազալտի երկնիստ կոթող՝ ուրարտական թագավոր Արգիշտի 2-րդի արձանագրությամբ, որը հայտնում է Ծուլուկի երկրի գրավման մասին[2]: Այժմ այդ քարը տեղափոխել է Երևան: Սիսիանի Թանահատի վանքը կոչվել է նաև Կարմիր վանք, քանի որ կառուցված էր կարմիր տուֆից: Թասիկ և մոտակա մնացած գյուղերի բնակիչների հավատը վանքի հանդեպ այնքան մեծ է, որ մինչև հիմա էլ գործածում են «Կարմիր վանքը վկա է» արտահայտությունը: Այսօր դեպի Թանահատի վանք տանող ճանապարհը խիստ դժվարամատչելի է, սակայն մոտակա գյուղերի բնակիչները շարունակում են կիսավեր վանքում մատաղ անել, մոմ վառել: Թանահատի վանքն այժմ հրատապ վերականգնման կարիք ունի: Մոտակա գյուղերի բնակիչները հետաքրքիր ավանդազրույցներ են պատմում վանքի կառուցման մասին: Այդ ավանդազրույցներից մեկի համաձայն՝ վանքը կառուցել է սյունեցի տիկին, որ իր երկար հյուսերով տեղափոխել է կառուցման համար անհրաժեշտ քարերը: Բայց պատմական աղբյուրները ոչ մի տեղեկություն չեն հաղորդում սյունեցի այդ կնոջ մասին: Մեկ այլ հետաքրքիր ավանդազրույցի համաձայն էլ վանքի պահապանը վանքի պատերի քարերի կարմիր գույնի օձն է:

Այժմ անդրադառնանք Վայոց Ձորի Թանահատի վանքին և նրա Ս. Ստեփանոս եկեղեցուն, որի պատերի արձանագրություններում էլ առկա են կանանց գործունեության մասին հիշատակություններ:

Վայոց Ձորի Թանահատը գտնվում է Վերնաշեն գյուղից հարավ-արևելք՝ 6-7 կիլոմետր հեռու՝ Մալիշկա տանող ճանապարհի վրա: Թանահատի վանքում պահպանված շինություններից է **Սբ Ստեփանոս** եկեղեցին: Այն կառուցված է մուգ գույնի սրբատաշ քարերով: Բացի արձանագրություններից պահպանվել են նաև գեղեցիկ բարձրաքանդակներ:

Թանահատի վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու հարավային պատի տակ արտաքուստ, ներքին կամարի մի գոգավոր քարի վրա պահպանված 10 տողանոց արձանագրության մեջ նշվում է Խալաշահի դուստր Խաթունի կողմից եկեղեցուն 40 դեկան նվիրելու մասին:[3] Ի դեպ, Խաթուն անունը նշանակում է ազնվական տիկին[4]:

Ս. Ստեփանոսի արևմտյան մուտքի կամարակալ քարի արձանագրությունը տեղեկություն է հաղորդում 1307 թվականին Հասան սպարապետի տիկին Թաճերի կողմից Թանահատի վանքին տրված նվիրատվության մասին: Ահա այդ արձանագրության տեքստը.

---

1 Դիվան հայ վիմագրության, Հ. 3, էջ 72:
2 Քրիստոնյա Հայաստան, Հանրագիտարան, Երևան, 2002, էջ 378:
3 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 75:
4 **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, Հ. 2, 1944, էջ 444:

ԹՎ:ՉԾԶ: (1307) ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ԹԱՃԵՐՍ ԴՈՒՍՏՐ| ՈՒՔԱՆԱ. ԱՄՈՒՍԻՆ ՀԱՍԱՆԱ ՍՊԱՐԱՊԵ|ՏԻՆ ՀԱՈՑ ՈՐԴՈՅՆ ՊՌՈՇԱ ԵՏՈՒ ԸՆԾԱ Ի ՀԱ|ԼԱԼ ԸՆՉԻՑ ԻՄՈՅ ՀԱՅՐԵՆԻ ՏԱՆՍ ՄԵՐ ԹԱՆԱՏԻ ՎԱՆԱՅ| ԱՌԱՋԻ ՎԱՐԱԳԱ ՍԲ ՆՇԱՆԻՍ ԵՒ ՍԲ ՀԱՐԱՊԵՏԻՍ. ՄԻԱԲԱՆՔՍ| ՍԱՀՄԱՆԵՑԻՆ:Դ: ՊԱՏԱՐԱԳ ԻՆՁ:Ա: ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹ ԱՒՐ ՀՈԳՈՅՆԳԱԼՍՏԷՆ:Բ: ՓՈԽՄԱՆ ԱԾԱԾՆԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔ|Ն ԱՒՐՀՆԻՆ[1]:

Այս արձանագրության մեջ հիշատակված Թաճերը Հասան սպարապետի կինն էր, Էաչիի մայրը: Արձանագրությունից պարզ է դառնում, որ Թաճերը իր հայրենի տունը նվիրել էր Թանատի վանքին և պատվիրել պատարագ: Բացի այդ, Աճառյանը նաև նշում է, որ Թաճերը 1286 թվականին գրել է տվել մի Նարեկ, ավելի ճիշտ արտագրել է տվել[2]:

Ս.Ստեփանոսի արևմտյան մուտքի կամարի շրջանակից վեր գտնվող արձանագրության մեջ նշվում է 1313 թվականին Խալաշահի որդի Վախթանգի կնոջ՝ Աւթախաթունի կողմից Ս. Ստեփանոսի վանքին 100 դեկանի նվիրատվության մասին.

ԿԱՄԱԻՆ ԱՅ. ԵՍ ԱՒԹԱԽԱԹՈՒՆՍ ԱՄՈՒՍԻՆ ՎԱՂԹԱՆԿԱ ՈՐԴ|ՈՅ ԽԱԼԱՇԱՀԻ ՏՎԻ:Ճ: ԴԵԿԱՆ ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍԻՍ ՎԱՐԱԳԱ|ՍԲ ՆՇԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏՍ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ:Դ: ՍԻՐ ՊԱՏԱՐԱԳ: Բ: ՁԱՏԻԿԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆ|ԻՆ ԹՎ.:ՁԿԲ: (1313) ԽԱՓԱՆՈՂՆ ԴԱՏԻ:[3]

Սբ. Ստեփանոսի հարավային պատի արևելյան մասի արձանագրության մեջ հիշատակություն կա Սանճարի և նրա կնոջ Թաճմելիքի կողմից վանքին տրված նվիրատվության մասին.

Կամաւն այ ես ՍԱՆՃԱՐՍ ՈՒ ԹԱՃՄԼԸՔՍ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՍՏԵՓանոսիս եւ տվաք զկկու ԱՔԱՐԻՆ ՀՈՂՆ ՀՈՎՎԵՆՑ ՀՈՂՈՎՆ. ՄԻԱԲԱՆՔՍ ՏՎԻՆ հինգ ժամ Վարագայ խաչին ՏԱԻՆԻՆ. ԿԱՏՎՀԱՏԻՆ ԱՒԳԱՆ ԷԼ ՏՎԱՔ[4]:

Ս.Ստեփանոսի հյուսիսային պատի կենտրոնում պահպանված արձանագրության մեջ խոսվում է Թաճմելիքի կողմից 1 լուծ եզի նվիրատվության մասին:

ԿԱՄԱԻՆ ԱՅ. ԵՍ ԹԱՃՄԼԸՔՍ, ԴՈՒՍՏՐ ՄԽԻ|ԹԱՐԱ ԹՈՌՆ ԽԱԼԱՇԱՀԻՆ ՏՎԻ:Ա: ՎԵՑԿԻ ԻՄ| ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆՍ. ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ:Դ: ԺԱՄ ՍԱՆԴԽՏՈ ՏԱԻՆԻՆ:Բ: ԻՆՁ: Բ| ԻՄ ՄԱԻՐ. ԿԱՏԱՐԻՉՔ ԱՒՐՀՆԻՆ ԱՅ[5]:

Ս.Ստեփանոսի արևմտյան պատի հյուսիսային մասի արձանագրության մեջ հիշատակություն կա Էաչիի որդի Ջումէի և նրա կին Խոանդզեի կողմից եկեղեցուն նվիրած ջրաղացի քարի մասին.

ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱՅԿԱԼԻՆ ԱՅ| ԵՍ ՋՈՒՄԷՍ, ՈՐԴԻ ԷԱՉՈ ԵՒ ԿԵՆԱԿԻՑՆ ԻՄ ԽՈԱՆԴԶԷՆ| ՏՎԱՔ ՁԱՒԱԳ ԱԿԱՆ ՋՐԱՂԱՑՆ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍԻ| ԳԵՐԵԶՄԱՆԻՍ. ՎԱՐԴԱՊԵՏ, ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ:Դ: | ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ՍԲ. ԽԱՉԻՆ| ՏԱԻՆԻՆ:Բ: ԻՄ ԵՂԲԱՒՐՆ ՊԱՐ|ՈՆ ԱՍԱԴԻՆ:Ա: ԷԼԽՈՒԹԼՈՅ|. ԿԱՏԱՐՈՂՔՆ ԱՒՐՀՆԻՆ ԽԱՓԱՆՈՂՔՆ| ԴԱՏԻՆ ՅԱՅ[6]:

Արձանագրության մեջ հիշատակված Խոանդզե անունը, ըստ Աճառյանի,

1 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 76:
2 **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, Հ. 2, 1944, էջ 281:
3 Դիվան հայ վիմագրության, պրակ 3,էջ 77:
4 Նույն տեղում, էջ 78:
5 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 79:
6 Նույն տեղում, էջ 80:

պարսկերենից փոխառված Խոնձա (xonda) –մայր բառն է, որին ավելանալով zade-ծնեալ բառը՝ գործածվել է նաև Խոնադզե-իշխանածին ձևով[1]:

Ս.Ստեփանոսի արևմտյան պատի հարավային մասի արձանագրության մեջ էլ հիշատակություն կա Պենայի և նրա կին Սուսայի կողմից 1348 թվականին Փանձաթաղից այգիների նվիրատվության մասին.

ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ. ԵՍ ՊԷՆԱ, ՈՐԴԻ ՍՄԲ|ԱՏԱ, ԹՈՌՆ ԼԻՊԱՐՏԻ, ՏԵՐ ՓԱՆՁԱԹԱՂԻՆ ԵՒ| ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՍՈՒՍԱ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍԻՍ| ԵՒ ՏՈՒԱՔ Ի ՄԵՐ ՀԱԼԱԼ ՀԱՅՐԷՆԵԱՑ ՈՐ Ի Փ|ԱՆՁԱԹԱՂԻՆ ՁՄԱՁՄԱՆԵՆՑ ԵՒ ՁԱՒԱՆՇԵՆ|Ց ԷԳԻՆ ՄԵՐ ՀՈԳՈՅՍ ԲԱԺԻՆՆ. ԷՓՐԵՄ ՎԱՐԴԱՊԵՏՆ ԵՒ ՄԻԱԲԱՆ|ՔՆ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՄԵՁ ԱԾԱԾՆԻՆ ՏՕՆԻՆ|:Ձ: ՊԱՏԱՐԱԳ. ԵՒ ՈՎ ՈՐ ՄԵՐ ՀՈԳՈՅ ՏՈՒԱԾ ՎԱԽՄ |ԻՍ ՀԱԿԱՌԱԿ ԿԱՅ:ՅԺՐ: ՅԱՅՐԱՊԵՏԱՑՆ Ն|ՁՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ:

:ՉՂԷ: (1348)[2]:

Սբ. Ստեփանոսի արևմտյան պատի հյուսիսային մասում արտաքուստ, շինարարական մեծ արձանագրության ներքևում պահպանված արձանագրության մեջ նշվում է Բորինայի կողմից կատարված նվիրատվությունների մասին.

ԿԱՄԱՒ ԱՅ. ԵՍ ԲԱՒՐԻՆԱՅ ՄԻԱՅԲԱՆԵՑԱՑ ՍԲ ՈՒԽՏԻՍ. ԵՏՈՒ Ի| ՅԻՄ ՀԱԼԱԼ ԸՆՉԻՑ ԸՆՁԱՅ Ի ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍՍ. ՄԻԱՅԲԱՆՔՍ| ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԱՄԷՆ ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ՍԲ. ԽԱՉԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:[3]

Ըստ Աճառյանի՝ արձանագրության մեջ հիշատակված Բորինա անունն իգական է, բառի ծագումն անհայտ է[4]: Այս արձանագրությունն անթվակիր է և չենք կարող նաև պարզել, որ Թանահատի վանքին այդ նվիրատվությունը որ թվականին է կատարվել:

Ս.ՍՏԵՓԱՆՈՍԻ արևմտյան պատի հյուսիսային մասում արտաքուստ, նախորդից ներքև, 6 տողից բաղկացած արձանագրության մեջ հիշատակվում է Սախուխի և իր ամուսնու կողմից 1353 թվականին Սխտորալեզի այգու, Մեծ քարի հողի նվիրատվության մասին.

ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ. ԵՍ ԻՎԱՆԷ, ՈՐԴԻ ԽԱԼԹԻՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ| ԻՄ ՍԱԽՈՒԽ ԵՒ ՄՈՒՐԱՏ ՓԱՇԷՍ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՆՇԱՆԻՍ ԵՒ | ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍԻՍ ԵՒ ՏՎԻՔ ՁՄԵՐ ԳՆԱԾ ԻԳԻՆ Ի ՍԽՏՈՐԱԼԷԶ:Ա: ՀՈՂ Ի ՄԵ|ԾԱՔԱՐ ՄԻԱԲԱՆՔ ԽՈՍՏԱՑԱՆ:Դ: ՊԱՏԱՐԱԳ:Բ: ԻՆՁ,:Ա: ՍԱԽՈԽԻՆ:Ա:| ԷՍՈՒԿԱՆԻՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ, ԽԱՓԱՆԻՉՔՆ ԴԱՏԻՆ

Ի ՏԷ ԹՎ:ՊԲ:(1353)[5]

Ինչ վերաբերում է արձանագրության մեջ հիշատակված Սխտորալեզում գտնվող այգուն, ապա ասենք, որ Սխտորալեզ անունով գյուղը գտնվում էր Վայոց Ձորում, և գյուղի անունն առաջացել է Խոտորալեզ անվան սխալ ընթերցմամբ ստացված Սխտորալեզ ձևից[6]:

Ս. Ստեփանոսի արևմտյան պատի տակ արտաքուստ, թափված երեսպատման արձանագրված քարերի վրա հիշատակություն կա Ուտարի և նրա կնոջ՝ Գուռճիկի կողմից եկեղեցուն կատարած նվիրատվության մասին.

1 **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, Հ. 2, 1944, էջ 521:
2 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 81:
3 Դիվան հայ վիմագրության, պրակ 3,էջ 82
4 **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, Հ. 1, Երևան, 1942, էջ 403:
5 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 82-83
6 **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հ. 4, 1998, էջ 628:

ԿԱՄԱՒ ԱՅ. ԵՍ ՈՒՏԱՐ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԳՈՒՌ |ՃԻԿ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԵՒ ՏՎԱՔ Ի| ՀԱԼԱԼ ԸՆՉԻՑ ՄԵՁ ՀՈԳՈԲԱԺԻՆ. ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ| ՄԻԱԲԱՆՔՆ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԾԱՌԶԱՐԴԱՐԻՆ:Զ: ՊԱՏԱՐԱԳ.|:Դ: ԻՆՁ:Բ: ԳՈՒՌՃԻԿԻՆ ԿԱՏԱՐԻՉՔՆ ՕՐՀՆԻՆ ՅԱՅ[1]:

Այս արձանագրությունը ևս անթվակիր է, և չենք կարող պարզել Ուտարի և նրա կին Գուռչիկի կողմից կատարված նվիրատվության ժամանակը:

Ահա Թանահատի վանքի այս արժեքավոր արձանագրություններն են վկայում սյունեցի կանանց նվիրատվությունների մասին:

Հաջորդ վանքը, որի պատերի արձանագրությունները արժեքավոր տեղեկություններ են հաղորդում կանանց գործունեության մասին, Սպիտակավոր Աստվածածնի վանքն է:

Սպիտակավոր Աստվածածնի վանքի արձանագրություններում ևս բազմաթիվ տեղեկություններ կան կանանց նվիրատվական գործունեության մասին: Նախ նշենք, որ Սպիտակավոր Աստվածածնի վանքը գտնվում է Վերնաշեն գյուղից մոտ 7 կիլոմետր դեպի հյուսիս: Արձանագրություններում և ձեռագրական հիշատակարաններում կոչվել է նաև Սբ. Կարապետ. Անապատ, Բոլորաձորի կամ Բոլորաբերդի անապատ[2]: Այս նշանավոր վանական համալիրի շինությունները կառուցված են սպիտակ սրբատաշ ֆելզիտից, ինչի համար էլ ստացել է Սպիտակավոր անվանումը[3]: Վանքի շրջակայքը հարուստ է վայրի մասրենու և վարդենու թփերով, ինչի պատճառով էլ տեղացիներն այն կոչում են Գյուլվարդ կամ Ծաղկի վանք[4]: Սակայն հարկ է նշել, որ պատմական աղբյուրները շատ տեղեկություններ չեն պահպանել այս Սպիտակավոր վանքի մասին, իսկ պահպանված արձանագրություններն էլ հիմնականում նվիրակատվական բնույթի են:

Սպիտակավոր վանքի պահպանված շինություններից են Ս. Աստվածածին եկեղեցին, գավիթը, զանգակատունը: Սպիտակավոր Ս. Աստվածածնի եկեղեցու պատմությունը մեզ հետաքրքրում է հատկապես այն առումով, որ այն կառուցող Էաչի Պռոշյանի կինը՝ Մամախաթունը, Էլիկում Օրբելյանի դուստրն էր, որի մայրը՝ Թամթախաթունը, Մոմիկի և նրա արվեստի հովանավորողն էր: Նորավանքում գտնվող Մոմիկի լավագույն խաչքարերը շինված են Թամթախաթունի պատվերով, բնական է, որ դուստրը ծանոթ էր Մոմիկին և նրա արվեստին և կցանկանար իր տիրույթներում ևս նրա արվեստի ստեղծագործություններից ունենալ:[5] Մամախաթունը շինարարության ժամանակ թև ու թիկունք էր իր ամուսնուն, իսկ 1318 թվականին, երբ զոհվեց Էաչի Պռոշյանը, Մամախաթունն օգնեց որդուն՝ Ամիր Հասանին՝ շինարարությունն ավարտին հասցնել: Բացի այդ, Ամիր Հասան Բ-ն և նրա կին Բոբան նաև ընդարձակ տարածքներ են նվիրել նորակառույց եկեղեցուն[6]: Եկեղեցին կոչվում է Նորակնունք Ս. Աստվածածին[7]: Ս. Աստվածածնի եկեղեցին գմբեթավոր է, արտաքուստ քառանկ-

1 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 86:

2 Նույն տեղում, էջ 86:

3 Քրիստոնյա Հայաստան, Հանրագիտարան, էջ 919:

4 **Եղիազարյան Հ.**, Սպիտակավոր Սուրբ Աստվածածնի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, Էջմիածին ամսագիր, 1966, N 6, էջ 37:

5 Դիվան հայ վիմագրության, պրակ 3,էջ 86:

6 Քրիստոնյա Հայաստան, Հանրագիտարան, էջ 919:

7 Նույն տեղում, էջ 919:

յունի և ներքուստ խաչաձև, որը գոյացել է չորս անկյուններում կրկնահարկ ավանդատներ կառուցելու հետևանքով: Եկեղեցու միակ մուտքը արևմտյան կողմից է: Շենքը զարդարված է գեղեցիկ զարդաքանակներով ու բարձրաքանդակներով, որոնցից հատկապես աչքի է ընկնում հյուսիսային պատի բարձրաքանդակը, որում պատկերված է որսի տեսարան՝ մի ծերունի և երկու երիտասարդներ՝ զինված նետերով ու աղեղներով. երիտասարդներից մեկը հեծյալ է և նետն ուղղել է եղջերուի վրա: Այս բարձաքանդակի վերևի հատվածում փորագրված է «Ամիր Հասան որդի Պռոշա»[1]:

Գավիթը քառանկյունի շենք է, որի պատերի մեջ կան որմնանկարներով ձևավորված ոչ խոր, ընդարձակ խորշեր, որոնք հատուկ էին միջնադարյան մատենադարաններին: Շինարարական արձանագրություն չունի[2]: Գավիթի պահպանված մասերից երևում է, որ այն չի ունեցել գավիթներին հատուկ սյուներ, կիսասյուներ, բայց ունեցել է 4 մուտք:

Հաջորդ կառույցը Զանգակատունն է, որ կրկնահարկ կոթողանման շենք է՝ շինված 1330 թ. Հովհաննեսի և իր ամուսին Թաճի միջոցներով[3]: Այն ավելի շատ նման է հաղթական կամարի:

Սպիտակավոր Ս. Աստվածածինը վերանորոգվել է 1960-70-ական թթ. և 2006 թվականին: Այս եկեղեցու կառուցման պատմությունը, արձանագրությունները, արտաքին տեսքը նկարագրելուց բացի անհնար է չանդրադառնալ այդ վայրի՝ սրբավայր լինելուն: Ինչքան էլ թեմայից շեղում լինի, անհնար է չանդրադառնալ, քանի որ Սպիտակավորը զուտ հուշակոթող չէ, այլ Նժդեհյան սրբավայր: Երկար դժվարություններից հետո 1987 թվականի հունիսի 17-ին Նժդեհի աճյունի մի մասը տեղափոխել և ամփոփել են Սպիտակավոր վանքում: Ամեն տարի հունիսի 17-ին մեծ թվով ուխտավորներ են գալիս Սպիտակավոր:

Այժմ նշենք Աստվածածնի արձանագրություններում հիշատակված կանանց գործունեության մասին: Այսպես, Սպիտակավոր Աստվածածնի հյուսիսային պատի արձանագրության մեջ նշվում է Բոբայի կողմից 1340 թվականին Ս. Աստվածածնի եկեղեցուն այգի նվիրելու մասին.

ՅՈՒՍՈՎՆ ՈՐ ԱՌ ԱԾ ԵՍ ԲՈԲԷՍ ՁԱՌԱՒԷՏԿ|ԱՆՑ ԱՅԳԻՆ, ՈՐ ԻՄ ՀԱԼԱԼ ԳՆՈՒԱԾՔ ԷՐ ՏՎԻ| ՅԱՆԱՊԱՏՆ ՍՊԻՏԱԿԱՒՈՐ ԱԾԱԾՆԻՍ ԻՄ ՀՈԳՈՅ ԲԱԺԻՆ, Ի ՁԵՌՆ ՍԲ ՄԿՐՏՉԻՆ| ԵՒ ՍԲ ՀԱՅՐՆ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԳՐԵՑԻՆ ՓՈԽՄԱՆ ԱԾԱԾԻՆ:Բ: ՊԱՏԱՐԱԳ Ի ԹՎԻՍ:ՉՁԹ: (1340) ՅԱՄԷՆ ԽԱՐՃԷ ԱՁԱՏ ՀԱԿԱՌԱԿՆ ԴԱՏԻ ՅԱՅ:[4]

Սպիտակավոր Աստվածածնի հյուսիսային պատի վրա պահպանված արձանագրության մեջ ևս նշվում է Բոբայի և իր ամուսին Ամիր Հասանի կողմից այգիների նվիրատվության մասին.

ՅՈՒՍՈՎՆ ՈՐ ԱՌ ԱԾ ԵՍ ԱՄԻՐ ՀԱՍԱՆ ՈՐԴԻ| ԷԱՉՈ, ԵՍ ԲՈԲԱ ԴՈՒՍՏՐ ՁԱՔԱՐԻԱԻ ՄԵՐ ՀԱՒՐԵՆ|ԵՑՆ Ի ԽՍՏՈՐԱԼԷՁ ՁՆԱԽԱՁՊԱՐԱՌՆ ՁՁԱՀԵՆԵՆՑ ԱՅԳԻՆ, ՁԴԱՒԹԵՆՑ ԱՅԳ|ԱՅՏԵՂԻՆ ԿԷՄՆ ՏՎԱՔ ՍԲ ԱՆԱՊԱՏԻՍ ԵՒ ԳՐԻ|ԳՈՐԻՆ ԳԵՐԵՁՄԱՆԻՍ, Ի ՁԵՌՆ ՍԲ ՀԱՅՐ ՄԿՐՏՉԻՆ| ՄԵԾ ՅՈՒՍՈՎ ՅԻՇԱՏԱԿ ՄԵՁ ԿԻ

1 **Եղիազարյան Հ.**, Սպիտակավոր Սուրբ Աստվածածնի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, Էջմիածին ամսագիր, 1966, N 6, էջ 38:

2 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 86:

3 Նույն տեղում,էջ 86:

4 Դիվան հայ վիմագրության, պրակ 3,էջ 97:

ՆԱԽՆ|ԵՑՆ ՄԵՐՈՑ, ՍԲ ՀԱՅՐՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ| ԿԱՐԳԵՑԻՆ ՏԱՐԷՆ:Դ: ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ| ԱՒԱԳ:Ե: ՇԱԲԱԹ ԵՒ ԶԱՏԻԿ:[1]

Արձանագրության մեջ հիշատակված Խստորալեզը նույն Սխտորալեզն է, Խոտորալեզ գյուղանվան սխալ արտասանությունը: Թանահատի վանքի նվիրատվական արձանագրություններից մեկում ևս նշվում է այդ գյուղի այգիների նվիրատվության մասին:

Սպիտակավոր Աստվածածնի արևմտյան պատի հյուսիսիային մասի արձանագրության մեջ վկայություն կա Գրիգորեսի և նրա կին Շնոհվորի կողմից Աստվածածնի վանքին հողերի նվիրատվության մասին՝ որպես ընծա.

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՄԱՐԳԱՐԷ| ՎԱՐԴԱՊԵՏՍ ԵՒ ՀԱՐԱԶԱՏՆ ԻՄ ԳՐԻԳՈՐԷՍ| ԵՒ ԿԻՆ ԻՒՐ ՇՆՈՀՎՈՐ ՏՎԱՔ| ԸՆԾԱ ԱԾԱԾՆԻ ԶԹԱՃԵՐԻ ՀՈՂՆ ՈՒ ԶՁՀՏԻՆ ՈՒ| ԶՄՈՒՍԿԱՆՑ ՊԱՏԱՒՆ ՈՒ ԶԹԵ|ՂՈՒՏՆ, ՈՐ ՄԵՐ ԳՆՈՒԱԾՔ ԷՐ| ՈՐ ԶՄԵԶ Ի ՊԱՏԱՐԱՔՆ ՅԻՇԵՆ:[2]

Զանգակատան արևմտյան երեսի խորշի պատի արձանագրության մեջ նշվում է 1330 թվականին Հովհաննեսի և նրա կենակից Թաճի կողմից զանգակատան կառուցման մասին.

ԹՎԻՍ:ՉՀԹ: (1330) ՊԱՐՈՆՈՒԹՆ . . . . . ԿԱՄԱՒ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ ԵՍ ՅՈՀԱՆԷՍ ԵՒ ԿԵՆԱԿԻՑ ԻՄ ԹԱՃՆ ՇԻՆԵՑԱՔ ԶԱՆԿԱԿՍ ԵՒ ԶՏՈՒՆ ՆՈՐԱՅ ՏՎԱՔ:Կ: ԾՆԱԾ ԱՐԴԵԱՆՑ. . . ՊԱՐՈՆ ԲՈՒՐԹԵԼ . . . . ՈՐԴՈՑ ՆՈՑԻՆ ԿԷՍՆ ՄԵՐ ՀՈՂՈՅՍ Ի ԿՈՒՐԵՍՆ:[3]

Արատեսի, Նորավանքի և Ցախաց Քարի նշանավոր ու գեղեցկատեսիլ վանքերը ևս իրենց մեջ ամփոփում են մեր լեռնաշխարհի կանանց նվիրատվությունները և շինարարական գործունեությունը փաստող մի շարք արձանագրություններ:

Նախ ասենք, որ Արատեսի վանքին կից, ըստ Ստ. Օրբելյանի հարկացուցակի, եղել է 6 հարկաչափ տվող գյուղ[4]: Արատեսի վանքը գտնվում է Եղեգիս գետի Արատես վտակի ափին, բլրի գագաթին[5]: Վանքը բաղկացած է իրար կից 4 մեծ և 5 փոքր շենքերից, դրանցից 8-ը կանգնած են նույն ուղղության վրա՝ հյուսիսից հարավ, իսկ մեկը կից է դրանց արևմուտքից: Վանքի եկեղեցիներն արձանագրությունների մեջ կոչվում են Սբ Սիոն, Սբ Կարապետ և Սբ Աստվածածին: Վանքի շինարարությունը սկսվել է հյուսիսից. կենտրոնում մի թաղածածկ եկեղեցի է, որին կցվել են մատուռներ՝ հյուսիսից երկու, իսկ հարավից՝ երեք: Շենքի այս շինությունների խումբը կոչվել է Սբ Սիոն և կառուցվել է 7-րդ դարում: Հաջորդը ամենահարավային գմբեթավոր եկեղեցին է, որը կառուցվել է 10-րդ դարում: Գմբեթավոր եկեղեցին կոչվել է Սբ Աստվածածին, իսկ գավիթ-եկեղեցին՝ Սբ Կարապետ[6]

13-րդ դարի վերջին Ստ. Օրբելյանը Արատեսի վանքն իր կալվածքներով հանձնել է Նորավանքին՝ որպես ամառանոց, իսկ 1301 թվականին Արատեսի վանքին է նվիրել Գեղարքունիք գավառի 8 գյուղ[7]:

1 Նույն տեղում, էջ 97:
2 Նույն տեղում,էջ 86:
3 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 101:
4 **Օրբելյան Ս.**, էջ 373:
5 Քրիստոնյա Հայաստան, Հանրագիտարան, էջ 138:
6 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 120:
7 Քրիստոնյա Հայաստան, Հանրագիտարան, էջ 138:

Արատեսի վանքը հատուկ նշանակություն է ունեցել 13-րդ դարի վերջերին՝ պատմագիր Ստ. Օրբելյանի եպիսկոպոսության ժամանակ:

Գմբեթավոր եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային մասի արձանագրությունը տեղեկություն է տալիս Թաճմելիքի նվիրատվության մասին.

ԵՍ ԹԱՃՄԼԷՔ ՄԻԱԲԱՆԵՑԱՅ ՍԲ ՈՒԽՏԻՍ. ՄԻԱԲ|ԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑ|ԻՆ ՍԲ ԽԱՉԻՆ ՇԱԲԱԹ|ԱՒՐՆ: Ա. ՊԱՏԱՐԱԳ[1]

Իսկ կենտրոնական գավիթի հարավ արևմտյան խորշի կամարի քարի վրա պահպանված 10 տողանոց արձանագրությունը տեղեկություններ է հաղորդում Մամաքի կողմից եկեղեցուն կատարած նվիրատվության մասին:

ԵՍ ՄԱՄԱՔՍ Մ|ԻԱԲԱՆԵՑԱԼ ԵՒ ԷՏ|ՈՒՉԻՆ ՉՈՒՆԷԻ Ի ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ. ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍԱՀՄԱՆԵՑ|ԻՆ:Ա: ԱՒՐ ՊԱՏԱՐԱՔ՝ ՓՈԽՍԱՆ ԱԾԱԾՆԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ԱՅ ԵՒ ԽԱՓԱՆԻՉ|ՔՆ ԴԱՏԻՆ Ի ՏԷ[2]:

Նորավանքի մասին մենք արդեն որոշ չափով անդրադարձել ենք Մինա խաթունի գործունեությունը շարադրելիս, այժմ անդրադառնանք մյուս կանանց գործունեությանը: Այսպես, Նորավանքի գավիթի հյուսիսային պատի արձանագրությունը տեղեկություն է հաղորդում Գոնցեի կողմից 1345 թվականին խանգահի այգու նվիրատվության մասին.

ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ԳՈՆՑԷՍ ԹՈՌՆ ՀԱՍԱՆԱ| ԴՈՒՍՏՐ ՊԱՐՈՆ ԽԱՒՍՐԱՎԿԱ ՄԻԱԲԱՆԵՑ|ԱՅ ՍԲ. ՈՒԽՏԻՍ ՆՈՐԱՎԱՆԻՑ, ՊԱՐՈՆՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆ ԲՈՒՐԹԷԼԻՆ ԵՒ ՏՎԻ ՁԽԱՆԳԱՀԻ ԷԳԻՆ| ԱՄԱՏԻՆ ՀՈԳՈՅՆ ՄԻԱԲԱՆՔ ԽՈՍՏԱՑԱՆ:Զ: ՊԱՏԱՐԱԳ ՅԱ|ՅՏՆՈՒԹԵԱՆ ՈՒԹԱՒՐԱՑՆ:Բ: ԻՆՁ:Բ: ԱՄԱՏԻՆ,:Ա: ՀԱՍԱՆԱ|:Ա: ԹՈՒԽԹԱՆ Է: ԹՎ.:ՁՂԴ: (1345)[3]

Գավթի հյուսիսային պատի արևելյան եզրի արձանագրությունն էլ վկայում է Խալաշահի դուստր Խաթունի կողմից 300 սպիտակով այգու գնման և նվիրման մասին.

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ԽԱԹՈՒՆ ԴՈՒՍՏՐ ԽԱԼԱՇԱՀԻ ՄԻԱԲԱՆԵՑԱՅ ՍԲ ՆՇԱՆԻՍ ՈՒ ՏՎԻ:Յ: (300) ՄՊԻՏԱԿ Ի ՅԱՌՓԱՅ ԱՅԳԻ ԳՆԵՑԻ ՄԱՒՏ Ի...|ՏՐ ՍԱՐԳԻՍ ՈՒ ՄԻԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՏՐԸՆԴԱՌԱՋԻՆ|:Բ: ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ԽԱԹՈՒՆԻՍ:[4]

Գավթի հարավային պատի արևմտյան մասի արձանագրության մեջ նշվում է, որ Հազարին և նրա ամուսին Մլքը (հավանաբար Մլքեն) զավակ չունեին, ուստի իրենց ունեցվածքը՝ ձեռատունկ այգին և իրենց տունը, նվիրում են Սբ Նշան եկեղեցուն: Ահա այդ արձանագրության տեքստը.

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՀԱԶԱՐԻ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԼԸՔ ՈՉ ՈՒՆԷԱՔ ՁԱՒԱԿ ԵՐ|ԿՐԱՒՈՐ, ՍՏԱՑԱՔ ՁԱՒԱԿ ԱՆԾԵՌԱՆԱԼԻ ՁՍԲ ՆՇԱՆՍ ԵՒ ՏՎԱՔ ՁՄԵՐ| ՁԵՌԱՏՈՒՆԿ ԱՅԳԻՆ ՈՒ:Գ: ԴՈՒՌՆ ՏՈՒՆ ՄԵՐ ՇԻՆԱԾ Ի ՉՎԱՍ ՏՐ| ՍԱՐԳԻՍ ՈՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ:Գ: ՊԱՏԱՐԱԳ ԿԱՏԱՐԻՉ|ՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ ԵՒ ԽԱՓԱՆԻՉՔՆ ԴԱՏԻՆ Ի ՏԷ ՈՎ ՀԱԿԱ|ՌԿԱ:ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՆՁՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ:[5]

Նորավանքի Բուրթելաշեն եկեղեցու երկրորդ հարկի մուտքի շրջանակի շինարարական արձանագությունը վկայում է Բուրթել իշխանաց իշխանի և նրա կին Վախախի ու որդիների կողմից եկեղեցու շինարարության մասին.

1 Նույն տեղում, էջ 127:
2 Նույն տեղում, էջ 128:
3 Նույն տեղում, էջ 223:
4 Նույն տեղում, էջ 223:
5 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 224:

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՊԱՐՈՆ ԲԻՒՐԹԷԼ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ՎԱԽԱԽ ԵՒ ՈՐ|ԴԻՔ ԻՄ ԲԵՇՔԵՆ ԵՒ ԻՆԱՆԻԿ ՇԻՆԷՑԱ|Ք ԶԷԿԵՂԵՑԻՍ ՄԵՐ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ:[1]

Բուրթելաշեն եկեղեցու խաչքարն ունի հետևյալ նկարագրությունը. ճակատին Հիսուս նստած, ձեռքին գիրքը՝ վրան ուռուցիկ տառերով գրված. ԵՍ ԵՄ ԼՈՒՅՍ, երկու կողքերին՝ ավետարանիչները՝ ձեռքերը մեկնած Հիսուսին, հենված է գավիթի արևմտյան մուտքի կողին հարավից: Խաչքարի վրա արձանագրված է.

ԵՍ ԹԱՄԹԱ ԽԱԹՈՒՆՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿ|ՈՒԹԻ, ՀՈԳՈ ԱԹԱՊԱԿ ՏԱՐՍԱՒՃԻՆ ԵՒ ՅԱՐԵՒՇԱՏՈՒԹԻ ՈՐԴՈՅ ԻՄՈՅ ԲԻՒՐԹԷԼԻՆ ԵՒ ԲՈՒՂՏԱՅԻՆ| ԹԻՎՆ:ՉԾԼ:(1308): ՄՈՄԻԿ ՎԱՐԴՊԵՏ ՅԻՇԵՑԵՔ[2]**:**

Սյունիքի Վայոց Ձոր գավառի Ցախաց քար վանքում ևս պահպանվել են արձանագրություններ, որոնք վկայում են կանանց գործունեության մասին: Նախ նշենք, որ Ցախաց քար վանքը գտնվում է ներկայիս Արտարոյնք գյուղից շուրջ 6.5 կմ հյուսիս-արևելք[3]:

Ցախացքար վանքը գտնվում է Եղեգիս և Ալայազ գյուղերից 6-7 կիլոմետր հեռավորություն ունեցող մի բարձրադիր սարավանդի վրա, որը շրջապատված է հիանալի արոտավայրերով և խոտհարքներով: Վանքի շինությունները բաղկացած են երկու գլխավոր խմբերից, որոնք իրարից հեռու են մոտ 200 մետր: Առաջին հուշարձանախմբի գլխավոր եկեղեցին կոչվում է Սբ Կարապետ, որը կենտրոնագմբեթ է՝ շինված մաքուր, սրբատաշ ու մեծ քարերով: Այն Վայոց ձորի լավագույն ճարտարապետական կառույցներից մեկն է. մուտքը, պատուհանները և այլ ակնառու մասերը ձևավորված են ինքնատիպ և ճաշակավոր զարդերով: Հարավային պատին եղել է թևատարած արծվի բարձրաքանդակ, որը ճանկերով բռնել է խոյին (այժմ ընկած է), իսկ հյուսիսային պատին (նույնպես արտաքուստ)՝ առյուծը առաջին երկու ոտքերով բռնել է ցուլի կամ եզան թիկունքից[4]: Այս խմբի հաջորդ կառույցը Սբ Նշան երկհարկանի դամբարան եկեղեցին է:

Ցաղաց քարի վանքի հուշարձանների երկրորդ խումբը առաջինից հեռու է շուրջ 100 մետր: Այս հուշարձանախմբի գլխավոր կառույցներից է Սբ Աստվածածին եկեղեցին: Հաջորդ նշանավոր կառույցներից է Սբ Հովհաննեսը, որը կառուցված է կոպտատաշ քարերով ու կրաշաղախով[5]:

Ցաղաց քարի պեղումների ժամանակ հայտնաբերվել է շինարարական, նվիրատվական և հիշատակագրային բովանդակությամբ շուրջ 85 արձանագրություններ:

Մեզ հետաքրքրող, կանանց կողմից նվիրատվություն կատարած արձանագրություններից մեկը պահպանվել է ս. Հովհաննեսի գավիթի ներսում: Ահա այդ արձանագրության տեքստը.

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՄԱՄԱՅՍ ԻՄ ԱՐԴԵԱՄԲՔ ՆՈ

---

1 Նույն տեղում, էջ 240

2 Նույն տեղում, էջ 243:

3 **Մելքոնեան Հ.**, Ցաղաց քար վանքի պեղումները և նորայատ արձանագրութիւները, Նորավանք, Մոնրէալ-Երեւան, 2001, էջ 84:

4 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 148-149:

5 **Մելքոնեան Հ.**, Ցաղաց քար վանքի պեղումները և նորայատ արձանագրութիւները, Նորավանք, Մոնրէալ-Երեւան, 2001, էջ 85-86:

ՀՈԳԵՑԻ ՁԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ԶԻՄ ԱՐԾԱԹ
Ի ԽԱՉՆ ԱՅԼ ԵՏՈՒ ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔՍ ԳՐԵՑ
ԻՆ Ի ՏԱՐԻՆ .Ե. (5) ԺԱՄ ԻՄ ՀԱՒՐՆ ՍԵՒԱԴԵՒ Զ
ԱՏԿԻ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻՆ ՈՐ ԽԱՓԱՆԵ Դ
ԱՏԱՊԱՐՏԻ, ԿԱՏԱՐԻՉՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ[1]:

Հ. Մելքոնյանը Ցաղաց քարին նվիրված վերոնշյալ հոդվածում, ելնելով արձանագրության տառաձևերից, արձանագրության փորագրման ժամանակը համարում է 13-14-րդ դարերը և նշում, որ արձանագրության մեջ վկայված Սևադայի և նրա դստեր մասին այլ տեղեկություններ չկան[2]:

Ցաղաց քարի հաջորդ արձանագրությունը, որը վկայում է Լիպարիտ իշխանի կնոջ՝ Ասփայի կողմից վանքին տված Արտեբոյն մեծ արտի մասին, պահպանվել է Սբ Կարապետի հարավային մուտքի շրջանակի վերին մասի կենտրոնի և արևելյան կողի վրա: Ահա այդ նվիրատվության արձանագրությունը.

ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ԱՍՓԱՅՍ ԱՄՈՒՍԻՆ ԼԻՊԱՐԻՏ ԻՇԽԱՆԻ ՏՎԻ ՅԱՐՏԵԲՈՅՆ ԶՄԵԾ ԱՐՏ ԻՒՐՍ|ԱՀՄԱՆԱՒՔՆ Ի ՍԲ. ՅՈՎԱՆԷՍ ՈՐ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ ԷՐ Ի ՀՆՈՒՑ ԵՒ ՍՈՔԱԼ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԱՒՐ ԺԱՄ ՈՐ ՀԱԿԱՌԱԿԱ ՅԻՄՈՑ ԿԱՄ| ՅԱՒՏԱՐԱՑ, ՄԱՍՆ ՈՒ ԲԱԺԻՆ ԸՆԴ ՅՈՒԴԱԼԻ ԵՂԻՑԻ| ԱԾԱԾԻՆ ՏՈՒՆԻՆ ԺԱՄ ԱՍՓԻՆ ԱՌՆԵՆ: [3]

Աշխարհիկ շինություններից Սելիմի քարավանատունը ևս մեզ տեղեկություններ է հաղորդում այն մասին, որ ամուսնու՝ Չեսար Օրբելյանի հետ միասին քարավանատան կառուցման աշխատանքներին մասնակցել է նաև կինը՝ Խորիշահը: Սելիմի քարավանատունը ավատատիրական Հայաստանի բոլոր քարավանատներից համեմատաբար ամենալավ պահպանվածն է: Քարավանատունը կառուցված է հին քարավանային ճանապարհի վրա: Սելիմի քարավանատան կառուցման ճիշտ ժամանակը վկայված է երկու շինարարական արձանագրություններով, մեկը՝ հայերեն, մյուսը՝ արաբերեն լեզուներով:

Չնայած հայերեն արձանագրության ավելի ընդարձակ լինելուն և արաբերենի համառոտությանը՝ դրանց բովանդակությունը համընկնում է, եթե չհաշվենք այն հանգամանքը, որ քարավանատան կառուցող իշխան Չեսար Օրբելյանը հայերեն արձանագրության մեջ նշվում է որպես իշխանաց իշխան Սմբատի որդին, իսկ մյուսում՝ Լիպարիտ իշխանի: Հայերեն արձանագրության մեջ քարավանատան կառուցման ժամանակը նշված է ՉՁԱ թվին (1332 թվականին): Արձանագրությունը փորագրված է ներսում՝ նախասրահի եռանավ դահլիճի հարավային պատի վրա: Արաբերեն արձանագրությունը փորագրված է դրսի կողմից՝ նախասրահի մուտքի կիսաշրջանաձև բարավորի վրա:[4]

Արձանագրության տեքստը մեզ հետաքրքրում է այն առումով, որ նշվում է թե շինարարության ժամանակ ամուսնուն աջակից, թև ու թիկունք է եղել նաև Չեսար Օրբելյանի կինը՝ Խորիշահը: Ահա կնոջ մասնակցությունը փաստող արձանագրությունը.

ՅԱՆՈՒՆ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ՀՉԱՒՐԻՆ ԱՅ Ի ԹՎ:ՉՁԱ: (1332), ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵ. ԲՈՒՍԱՒԴ ՂԱՆԻՆ, ԵՍ ՉԵՍԱՐ, ՈՐԴԻ ԻՇԽԱՆ|ԱՅ ԻՇԽԱՆԻՆ

1 Նույն տեղում, էջ 88:
2 Նույն տեղում, էջ 88:
3 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 148-149:
4 **Հարությունյան Վ.**, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Ե., 1960, էջ 18:

ԼԻՊԱՐՏԻ ԵՒ ՄԱՒՐՆ ԱՆԱՒՆ, ԹՈՌՆ ԻՎԱՆԷԻ, ԵՂԲ|ԱՐՑ ԻՄ ԱՌԻՒԾԱԳԵՂ ԻՇԽԱՆԱՑՆ ԲԻՐԹԵԼԻՆ ԵՒ ՍՄԲԱՏԱ ԵՒ ԷԼԻԿՈՒՄԻՆ, ՅԱ|ՁԳԷ ԱՒՐՊԷԼԷՆՑ, ԵՒ ԿԵՆԱԿԻՑ ԻՄ ԽՈՐԻՇԱՀ, ԴՈՒՍՏՐ ԻՇԽԱՆԻՆ ՎԱՐԴԱՆՆԱ ԵՒ ԴՈՓԻՆ ՔՐ.....ՐԵՆ, ՅԱՁԳԷՍ ՍԵՆԻՔԱՐԻՄԱՆՑ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ՄԵՐՈՑ ՇԻՆԵՑԱՔ ՁՀՈՂԵՏՈՒՆՍ Ի ՓՐԿՈՒԹԻ, ՀՈԴՈՑ ՄԵՐ ԵՒ ԾՆՈՂ ԱՑ ԵՒ ԵՂԲԱՐՑ ՄԵՐ Ի ՔՍ ՆՆՁԵՑԵԼՈՑ. ԵՒ ԿԵՆԱՑ ԵՂԲԱՐՑ ԻՄՈՑ ԵՒ ՈՐԴՈՑ ՍԱՐՔՍԻ ԵՒ ՀՈՎԱՆԻՍԻ ՔԱՀԱՆԱՒ,| ՔՐԴԻՆ ԵՒ ՎԱՐԴԻՆ: ԱՂԱՉԷՄՔ ԶՊԱՏԱՀՈՂԴՍ ՅԻՇԵԼ ԶՄԵԶ Ի ՔՍ: ՍԿԻԶԲՆ ՏԱՆՍ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻՆ ԵՍԱՈ, ԵՒ ԿԱ|ՏԱՐՈՒՄՆ ԱՂԱՒԹԻՒՔ ՆՈՐԱ Ի ԹՎԻՍ:ՉՁԱ: (1332)[1]:

Այսպիսով, Օրբելյանների տիրապետության ժամանակ բավականին նպաստավոր պայմաններ էին ստեղծվել կանանց շինարարական և նվիրատվական գործունեության համար, ինչը չի կարելի ասել հետագա դարերի մասին, երբ Հայաստանը և նրա մաս կազմող Սյունիքը գտնվում էին թուրքմենական ցեղերի տիրապետության տակ:

GAYANE SHABUNTS - EPISODS FROM SYUNIK´S WOMEN´S BUILDING AND DONATION ACTIVITIES IN THE DAYS OF THE ORBELYANS - In the days of the Orbelyans the relative peace promoted economic and cultural life. In lithographic records and in Stepanos Orbelyan´s and Ghevond Alishan´s stories a lot of evidences are preserved about Syunik´s prominent women Mina Khatun´s, Aspa´s, Mamkan´s and others´ building and donation activities. Tanahat´s, Noravank´s, Aghuerdz´s, Spitakavor´s, Tsaghak´s and many other monastery´s donation and building records report a lot of information about it.

Key words: The Orbelyans, Mina Khatun, Aspa, Mamkan, Noravank, the monastery of Tanahat, Spitakavor Church, donation, church building.

ГАЙАНЕ ШАБУНЦ - ЭПИЗОДЫ ИЗ СТРОИТЕЛЬНОЙ И ДАРСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ЖЕНЩИН СЮНИКА ПРИ ОРБЕЛЯНАХ - В годы правления Орбелянов наступивший в Сюнике относительный мир опособствовал подьему экономической и культурной жизни. В лапидарных надписях и у Степана Орбеляна, Гевонда Алишана сохранились свидетельства о строительной и дарственной деятельности именитых женщин Сюника: Мина Хатун, Аспа, Мамкан и другие. Об этом есть подробная информация в записях строительного и дарственного характера монастырей Танаат, Нораванк, Ыгуердзи, Спитакавор, Цагац и многих других.

Ключевые слова: Орбеляны, Мина Хатун, Аспа, Мамкан, Нораванк, Танаатский монастырь, церковь Спитакавор, дарение, строительство церквей

1 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 177-178: